Sparkassen-ի | դպրոցական ծառայություն

ՓՈՂ, ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԱՎԵԼԻՆ

Տնտեսական կրթության հիմունքներ երիտասարդների համար

Աշխատանքային տետր միջնակարգ դպրոցի համար ֆինանսական անձնագիր ստանալու նպատակով


20
ԴՐԱՄ
50
ԴՐԱՄ
2003

Փող, ֆիննաններ և ավելին

Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար

Միխայել Շուհեն, Հանս Յուրգեն Շլյոսեր, Նադինե Մայեր

Նյութը տրամադրվել է Sparkassen-ի դպրոցական ծառայության կողմից՝ Հարավային Կովկասում, Ուկրաինայում և Իրանում իրականացվող Պատասխանատու Ֆինանսավորում տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամի կողմից և ֆինանսավորվում է Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից:

Շտուտգարտի գերմանական Sparkassen հրատարակչություն (Deutscher Sparkassenverlag Stuttgart)

Հեղինակներ

Տնտեսական կրթության կենտրոնը հմտությունների կենտրոն է, որը տրամադրում է տնտեսագիտական գիտելիքներ ինչպես աշակերտների և ուսանողների, այնպես էլ՝ շարունակական կրթության համար:

Դոկտոր պրոֆ. Հանս Յուրգեն Շլյոսեր
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) ղեկավար

Դոկտոր Միխայել Շուհեն
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի տնօրեն

Նադինե Մայեր
Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) ուսուցչուհի տնտեսական կրթության ոլորտում

Ցուցումներ

«Աշակերտ» և «ուսուցիչ» ձևակերպումները ներառում են նաև «աշակերտուհի» և «ուսուցչուհի» ձևերը: Այս տարբերակներն ընտրվել են՝ ընթերցանությունը հեշտացնելու նկատառումներից ելնելով:

Հեղինակային իրավունք

Գրքում ներառվել են հեղինակային իրավունքով պաշտպանվող ստեղծագործությունների բոլոր հղումները, սակայն դրանց ամբողջականությունը կամ ճշգրտությունը երաշխավորված չէ:

© Գերմանական Sparkassen հրատարակչություն ՍՊԸ, Շտուտգարտ
(Deutscher Sparkassen Verlag GmbH, Stuttgart), 2016
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս ձեռնարկը՝ բոլոր բաժինները ներառյալ, պաշտպանված է հեղինակային իրավունքով: Առանց հրատարակչության համաձայնության ձեռնարկի կիրառումը անթույլատրելի և պատժելի է հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ: Այն չի կարող վերարտադրվել էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով:

Խմբագիր՝ Բիրգիտ Շտեֆան
Տպագրիչ՝ Ժանեթ Նիկոլ, Մանուել Գոթվալդ
Շապիկի ձևավորում՝ ըստ Groothuis-ի, Lohfert-ի, Consorten-ի, glcons.de-ի գաղափարի, Համբուրգ
Նկարներ՝ Մաթիաս Զեբուրգեր, «Neubau Welt von Neubau», Շտեֆան Գրանդլ, (NeubauBerlin.com), ISBN 3-89955-072-2
Համակարգչային ձևավորում՝ visee-design.de Շտուտգարտ media office ՍՊԸ, Քորնվեստհայմ
Տպագրություն և կապմ՝ Schätzl Druck & Medien, Դոնաուվյորթ
Տպագրված է Գերմանիայում:

1-ին հրատարակություն 09/2007
6-րդ հրատարակություն 11/2016
310 679 400

MIX
Papier aus verantwortungsvollen Quellen
FSC* C107551
FSC
www.fsc.org

ՓՈՂ, ՖԻՆԱՆՍՆԵՐ և ԱՎԵԼԻՆ

Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար

Բաժին 1 — **Տնտեսվարության պահանջմունք, կարիք և անհրաժեշտություն** **4**
1.1 Պահանջմունքներ և կարիք 4
1.2 Տնտեսվարությունը որպես անհրաժեշտություն 6
1.3 Առաջարկ և պահանջարկ 8

Բաժին 2 — **Գործունակություն** **13**

Բաժին 3 — **Ֆինանսական կառավարում** **16**
3.1 Ո՞ր տեսակին եմ պատկանում ես 17
3.2 Եկամուտներ և ծախսեր ընտանիքում 18
3.3 Անձնական ծախսերի ֆինանսական գրքույկ 20

Բաժին 4 — **Ընթացիկ հաշիվ** **21**
4.1 Ինչպե՞ս բացել ընթացիկ հաշիվ 22
4.2 Դրամական փոխանցումներ 24
4.3 Ուղղակի դեբետագրում իրականացնելու գործընթաց 26
4.4 Պարբերական վճարումների հանձնարարական 29
4.5 Բանկային առցանց գործարքներ 34

Բաժին 5 — **Խնայում և ներդրում** **38**
5.1 Որքա՞ն գումար է ծախսվում և ինչի՞ վրա 38
5.2 Խնայումը որպես վճռորոշ խնդիր 39
5.3 Տոկոսը որպես որոշիչ գործոն 44

Բաժին 6 — **Վարկ** **45**
6.1 Ի՞նչ է պարտքը 45
6.2 Որո՞նք են պարտք վերցնելու դրդապատճառները 46
6.3 Ովքե՞ր են պարտատերերը 47
6.4 Պարտքը ոչ միշտ է պարտք 48
6.5 Վարկ 49
6.6 Վարկավորման իրավական հիմքերը 50
6.7 Վարկունակություն 51
6.8 Վարկի տեսակներ 52
6.9 Վարկի հետ կապված ծախսեր 54

1 ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ, ԿԱՐԻՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

1.1 Պահանջմունքներ և կարիք

1 Դասակարգի՛ր վերոնշյալ պահանջմունքներն՝ ըստ քեզ համար կարևորության:

2 Ի՞նչ հինգ պահանջմունքներ կավելացնեիր ցուցակին:

3 Փորձի՛ր խմբավորել պահանջմունքները՝ կազմելով հինգ խումբ: Փորձի՛ր յուրաքանչյուր խմբին որոշակի անուն տալ: Վերջում համեմատի՛ր դրանք ընկերոջդ հետ: Ո՞ր հարցում եք դուք համակարծիք, ո՞ր հարցում՝ ոչ:

1 ՏՆՏԵՍՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ, ԿԱՐԻՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Ամերիկացի հայտնի հոգեբան Աբրահամ Մասլոուն զարգացրել է պահանջմունքների թերևս ամենահայտնի մոդելը: Ըստ այդմ՝ նա պահանջմունքները բաժանում է հինգ մակարդակների.

- **Կենսաբանական/ֆիզիոլոգիական պահանջմունքներ,** որոնք պետք է բավարարված լինեն մյուս պահանջմունքներից առաջ: Սրանք կենսական կարևորություն ունեցող պահանջմունքներ են: Դրանց մեջ մտնում են սնունդը, ջուրը, ինչպես նաև քունը:
- **Ապահովության և անվտանգության պահանջմունքներ,** որոնք ուղղված են ապագային: Այստեղ կարևորվում է այն, որ առաջին խմբում նշված պահանջմունքներն իրագործելի լինեն ներկայում, ինչպես նաև ապագայում: Դրանք ներառում են օրենքներն ու կանոնները, ինչպես նաև կենսաթոշակային ապահովումը:
- **Սոցիալական պատկանելիության պահանջմունքներ**: Ցանկացած անձ ցանկանում է լինել հասարակության որևէ օղակի անդամ: Ընկերներ ու շփում, ինչպես նաև ընտանիք ունենալու ցանկությունը այս մակարդակին ամենաբնորոշ պահանջմունքներն են:
- **Հարգանքի և ինքնահարգանքի պահանջմունքներ,** որոնք ուղղված են անձի ճանաչմանն ու ինքնահաստատմանը: Ցանկացած մարդ ցանկանում է հասնել որևէ բանի կամ գովեստի արժանանալ իր արածի համար:
- **Ինքնաարտահայտման և ինքնահիրացման պահանջմունքներ:** Ցանկացած անձ ունի իր կյանքն ըստ իր պատկերացումների կառուցելու ցանկություն:

Ըստ Մասլոուի՝ հիմնական պահանջմունքներն են կանխորոշում մարդկային պահվածքը, հատկապես եթե դրանք բավարար չափով իրագործված չեն: Այդ պահանջմունքների պատճառով է մարդը ձգտում ապահովության և անվտանգության, ցանկանում ստեղծել կամ ամրապնդել սոցիալական կապեր և/կամ փնտրում ճանաչում և ինքնահիրացում: Սակայն այն բանից հետո, երբ մարդը բավարարում է իր քաղցը, նա ձգտում է հաջորդ՝ ավելի բարձր աստիճանի: Եթե 1-4-րդ կետերի հիմնական պահանջմունքները չբավարարվեն, դա կարող է հանգեցնել մի շարք անբարենպաստ հետևանքների, այդ թվում նաև՝ հիվանդությունների: Հենց այդ պատճառով դրանք հաճախ անվանում են բավային կարիքներ: Իսկ ինքնահիրացման պահանջմունքը, որը երբեք չի կարող ամբողջությամբ իրագործվել, անվանում են նաև երկրորդային կամ հոգեբանական կարիք:

Պահանջմունքների բուրգ



4 Նախորդ առաջադրանքի համար անհրաժեշտ էր նշված պահանջմունքները բաժանել հինգ խմբերի: Համեմատիր քո ընտրությունը Մասլոուի պահանջմունքների մոդելի հետ:

Հիմնավորիր քո բաժանումը և փորձիր քննադատաբար վերլուծել Մասլոուի մոդելը:

1.2 Տնտեսվարությունը որպես անհրաժեշտություն

Ցավոք, ոչ բոլոր կարիքներն է հնարավոր բավարարել: Պատճառներից մեկը հաճախ անբավարար ֆինանսական միջոցներն են, ինչը նշանակում է, որ մարդիկ պետք է պլանավորեն իրենց եկամուտներն ու ծախսերը՝ դրանք մեկը մյուսի հետ համաձայնեցնելով: Նույնիսկ պլանավորելու պարագայում կարևոր է հաշվի առնել, որ միջոցները կարող են բավարար չլինել հոգալու համար կարիքների ողջ ցանկը:

Այս գիտակցումը ստիպում է մարդուն որոշումներ կայացնել և գործել ըստ պլանի: Սրա վերաբերյալ տնտեսագիտությունն ունի երկու սկզբունք.

→ **Մաքսիմալացման սկզբունք.** տրված միջոցներով հնարավորինս բարձր արդյունքի հասնել:
Օրինակ՝ տվյալ քանակության բենզինով փորձել անցնել հնարավորինս շատ կիլոմետրեր:

→ **Մինիմալացման սկզբունք.** հնարավորինս սուղ միջոցներով հասնել ցանկալի արդյունքի:
Օրինակ՝ փորձել ծախսել հնարավորինս քիչ բենզին որոշակի կիլոմետրեր անցնելու համար:

Ա1 Տնտեսվարության ո՞ր սկզբունքը ո՞ր բովանդակությանն է համապատասխանում:

Բովանդակություն	Մաքսիմալացման սկզբունք	Մինիմալացման սկզբունք	Երկուսից և ոչ մեկը
Ա Սպասվում է դասարանային աշխատանք: Դու փորձում ես հնարավորինս քիչ ջանք գործադրելով՝ լավ գնահատական ստանալ:			
Բ Դպրոցական ծրագրում ունես թեթև ատլետիկա: Դու ուզում ես 20 մետրանոց թափավազքով հնարավորինս հեռու ցատկել:			
Գ Գնահատականը էական չէ, դու ուղղակի պիտի ստանաս անցողիկ գնահատական, այսպիսով՝ դու պարապում ես ընդամենը երեք ժամ:			
Դ Իր ապրանքների գինը պահպանելու նպատակով ձեռնարկությունը փորձում է կրճատել ծախսերը:			

1 ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ, ԿԱՐԻՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանափակ են, սակայն, մարդու ոչ միայն ֆինանսական միջոցները: Սահմանափակ կարող են լինել նաև ապրանքներն ու մատուցվող ծառայությունները: Ռեսուրսների սահմանափակ լինելը տնտեսական հիմնախնդիրներից է, ինչի արդյունքում տնտեսության բոլոր մասնակիցները ստիպված են դրսևորել տնտեսական ակտիվություն: Միայն այդպես կարելի է հասնել տնտեսության բոլոր մասնակիցներին ապրանքների և ծառայությունների առավելագույն ապահովմանը՝ առկա սղության պայմաններում: Ընդ որում՝ որքան ավելի սուղ է ապրանքը, այնքան ավելի բարձր է դրա գինը:

Գոյություն ունեն առավել սուղ ապրանքներ, ինչպես օրինակ՝ արվեստի գործերը կամ հնությունները, որոնց գների բարձրացումը տեղի է ունենում առավել կտրուկ: Աճուրդները ամենահայտնի ու արդյունավետ միջոցն են գին որոշելու համար, հատկապես, եթե հաշվի առնենք նաև, որ դրանք պակաս ժամանակատար են: Սովորաբար գների վերաբերյալ առանձին բանակցությունները չափազանց երկար են տևում, իսկ աճուրդները բարձրացնում են շուկայի արդյունավետությունը: Օրինակ՝ երբ կառավարություններն անց են կացնում բաց մրցույթներ, նրանք խնայում են այն ժամանակը, որը պետք է ծախսվեր ձեռնարկությունների և դրանց ներկայացուցիչների հետ երկարատև բանակցություններ վարելու վրա: Դուք նույնպես հավանաբար ինչ-որ պահի օգտագործել եք ինտերնետային ամենահայտնի աճուրդային հարթակներից մեկը՝ eBay-ը, որտեղ հնարավորություն ունեք տեղադրել այն իրերը, որոնց կարիքն այլևս չունեք և որոնք մեծ հաճույքով կվաճառեիք: Հարթակը կարող եք նաև օգտագործել որևէ աճուրդի մասնակցելու և գնում կատարելու համար:

Համացանցային աճուրդների 90%-ը տեղի է ունենում հենց eBay-ի միջոցով: Շուկայում eBay-ի գերիշխող դիրքի օրինակով կարելի է պարզաբանել աճուրդների «համացանցային ներգործությունները». որքան ավելի շատ մասնակիցներ ունի աճուրդը, այնքան ավելի գրավիչ է այն թե՛ գնորդների (նրանք գտնում են ավելի մեծ թվով առաջարկներ), թե՛ վաճառողների (նրանք գտնում են ավելի մեծ թվով հաճախորդներ) համար: Որպես առաջին համացանցային աճուրդային հարթակ՝ eBay-ը սկսել է իր գործունեությունը՝ արդեն իսկ ունենալով մասնակիցների մեծ թիվ, որը շարունակել է անընդհատ աճել:

Այնուամենայնիվ, համացանցային աճուրդների ժամանակ պետք է զգուշանալ, քանի որ, ի տարբերություն ավանդական աճուրդային ընկերությունների, համացանցային աճուրդներ առաջարկողները որակի վերահսկում չեն ապահովում: Բացի այդ, գնային առաջարկները հեշտությամբ կարող են ենթարկվել մանիպուլիացիայի. վաճառողները կարող են էլեկտրոնային հասցեներով իրենց սեփական ապրանքների համար կեղծ գնային առաջարկներ անել՝ դրանց գինը արհեստականորեն բարձրացնելու նպատակով:

u2 Իրականացնենք փոքրիկ փորձ: Հաջորդ դասի համար բե՛ր տասը դրամանոց մետաղադրամներ: Դու կմասնակցես աճուրդի: Փորձից հետո պետք է պատասխանես հետևյալ հարցերին.

Աճուրդները կարևոր են միայն այն դեպքում, երբ աճուրդի հանված ապրանքները սուղ են, և աճուրդի յուրաքանչյուր մասնակից դրանք որոշակի անձնական պատճառներով է ցանկանում ձեռք բերել: Որքա՞ն կարևոր էր քո համար աճուրդի հանված ապրանքը:	Աճուրդները հաճախ մարդուն կարող են գցել այսպես կոչված «աճուրդային տենդի» մեջ: Ապրանքը ստանալու համար ստեղծված մրցակցությունը կարող է ազդել քո գնային առաջարկի վրա: Արդյո՞ք քեզ վրա զգում էիր նման ներգործություն:
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....

1.3. Առաջարկ և պահանջարկ

Պահանջարկը ձևավորվում է տարբեր տեսակի ապրանքների նկատմամբ: Օրինակ՝ անվճար ապրանքների նկատմամբ, որոնց շարքին է դասվում օդը, որը մարդը շնչում է, կամ ծովի ջուրը, սպառման սուղ ապրանքների նկատմամբ, ինչպիսիք են սնունդը և հագուստը: Պահանջարկ կարող է ստեղծվել նաև բնական ռեսուրսների և արտադրական գործոնների նկատմամբ, ինչպես օրինակ՝ աշխատուժը:

Անվճար ապրանքներն առկա են անսահմանափակ քանակով, ինչի պատճառով էլ անվճար են: Սուղ ապրանքներն առկա են սահմանափակ քանակով և հետևաբար ունեն գին: Մարդկային ներգործության հետևանքով անվճար ապրանքների որակն ընկնում է, իսկ քանակը՝ նվազում: Այսպիսով, ժամանակից շուտ նվազում են նաև անվճար ապրանքները, հետևաբար դրանք նույնպես պետք է օգտագործվեն խնայողաբար: Դրա վառ օրինակն է խմելու ջուրը, որն աշխարհի շատ վայրերում սուղ է դարձել, և որի որակը նույնպես էապես ընկել է:

Որևէ ապրանքի նկատմամբ պահանջարկը պայմանավորված է շատ գործոններով, օրինակ՝ տրամադրության տակ առկա եկամտի չափով կամ այլ ապրանքների գներով: Պահանջարկի համար, սակայն, էական է ապրանքի գինը:

Ըստ պահանջարկի օրենքի՝ ապրանքի նկատմամբ պահանջարկն աճում է այն ժամանակ, երբ դրա գինն ընկնում է: Դրան հակառակ, երբ ապրանքի գինն աճում է, ընկնում է դրա նկատմամբ պահանջարկը: Նման օրինաչափությունները գործում են միայն անփոփոխ եկամտի պարագայում:

Պահանջարկ ունեցող ապրանքների գնի և քանակի միջև փոխհարաբերությունը տեսանելի է դառնում պահանջարկի կորի միջոցով (N)՝ երկչափ կոորդինատային համակարգ ներմուծելով: Հորիզոնական առանցքի վրա (x-երի առանցք) նշվում է ապրանքի քանակը (x), իսկ ուղղահայաց առանցքի վրա (y-ների առանցք)՝ ապրանքի գինը (p):

1 Շուկայում առաջարկում են արկղերով խնձոր: Սահմանի՛ր կոորդինատային համակարգի առանցքները:

Պահանջարկի կոր



2 Հետևյալ աղյուսակի մեջ դու տեսնում ես գներ և համապատասխան գների պարագայում արկղերի պահանջարկը:

Գինը ՀՀ դրամով	Արկղերի քանակը
0 ՀՀ դրամ	15
100 ՀՀ դրամ	14
200 ՀՀ դրամ	12
300 ՀՀ դրամ	11
400 ՀՀ դրամ	10
500 ՀՀ դրամ	8
600 ՀՀ	6
700 ՀՀ դրամ	4
800 ՀՀ դրամ	2
850 ՀՀ դրամ	1
950 ՀՀ դրամ	0

Ըստ առաջարկի օրենքի՝ ձեռնարկությունը մեծացնում է առաջարկի քանակը, եթե նա կարող է շուկայում հասնել առավել բարձր գնի իր ապրանքի համար: Եթե գներն իջնում են, ձեռնարկություններն իրենց առաջարկի քանակը նույնպես նվազեցնում են: Գնի և առաջարկվող ապրանքների քանակի միջև փոխհարաբերությունը կարելի է պատկերել առաջարկի կորի (A) միջոցով: Շուկայական տնտեսության մեջ ձեռնարկությունները սահմանում են այնպիսի գներ, որոնք նրանց թույլ կտան որոշակի քանակով ապահովել առաջարկ:

Ա3 **Էջ 9-ի գծապատկերից երկու կետ է աչքի ընկնում. հագեցվածության ծավալը ապրանքների այն քանակն է, որի նկատմամբ կառաջանա պահանջարկ ապրանքի անվճար լինելու պարագայում: Ապրանքն իր առավելագույն գնին հասնելու դեպքում այլևս չի ունենում պահանջարկ:**

Նշի՛ր և անվանի՛ր էջ 9-ի գծապատկերի վրա առավելագույն գինն ու հագեցվածության ծավալը:

Ա4 **Գյուղացիներին արվել են հետևյալ գնային առաջարկները, որոնց պարագայում նրանք պատրաստ են համապատասխան քանակությամբ առաջարկ անել:**

Գինը ՀՀ դրամով	Արկղերի քանակը
0 ՀՀ դրամ	0
100 ՀՀ դրամ	0
200 ՀՀ դրամ	1
300 ՀՀ դրամ	2
400 ՀՀ դրամ	3
500 ՀՀ դրամ	5
600 ՀՀ դրամ	8
700 ՀՀ դրամ	10
800 ՀՀ դրամ	12
850 ՀՀ դրամ	14
950 ՀՀ դրամ	15

Ա5 **Գծի՛ր առաջարկի կորը:**

Առաջարկի կոր



Գնագոյացման գիտափորձ (Pit-Market-Game)

Դուք գտնվում եք կտորի շուկայում: Կտոր վաճառողները կանգնած են քառակուսի սեղանների շուրջ և առաջարկում են իրենց ապրանքները: Գնորդները անցնում են սեղանից սեղան և բանակցում են վաճառողների հետ: Ընդ որում՝ պարտադիր չէ անմիջապես գնում կատարել կամ ավարտին հասցնել որևէ գործարք: Գնորդները ցանկացած պահի կարող են փնտրել այլ վաճառողների: Նպատակը ոչ միայն գործարք կատարելն է, այլև բանակցելը հնարավորինս լավ պայմանների համար:

Եթե համաձայնության եք եկել և կատարել գնում, ապա սակարկված գները և առևտրի քանակը գրվում են գրատախտակին: Այս դերը ստանձնում է շուկայի սեփականատերը: Կտոր վաճառողներն ու գնորդները գրանցում են իրենց արդյունքները խաղաքարտերում: Դրանով նրանց համար առաջին խաղափուլն ավարտված է, և նրանք կարող են նստել իրենց տեղերում: Ամենաուշը հինգ րոպե հետո շուկայի սեփականատերն ավարտում է խաղափուլը:

Խաղի ընթացքը

Մասնակիցներ՝
Վաճառողներ, գնորդներ և շուկայի սեփականատեր

Կանոններ՝

- Բոլոր տեղեկությունները, որ դու կգտնես քո խաղաքարտի վրա, գաղտնի են: Դրանք քեզ կօգնեն հաշվել գինը:
- Շուկայի սեփականատերը բացում և փակում է գործարքի փուլերը:
- Յուրաքանչյուր մասնակից կարող է յուրաքանչյուր խաղափուլի ժամանակ կատարել միայն մեկ գործարք:
- Բարդ հաշվարկներից խուսափելու համար թույլատրելի են միայն ամբողջ թվերով գները, օրինակ՝ 100 ՀՀ դրամ, 200 ՀՀ դրամ...

6 Կատարե՛ք գիտափորձը և անցկացրե՛ք արդյունքները թերթիկների մեջ, որոնք կարող եք գտնել հաջորդ էջում: Արե՛ք դա անմիջապես խաղափուլն ավարտելուց հետո:

Ո՞վ սկսեց բանակցությունները: Դա քո պահվածքի վրա ազդեցություն ունեցա՞վ:	Ինչի՞ հիման վրա ես հաշվարկել գինը:
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....

Վաճառողի արդյունքների թերթիկ

Դու ուզում ես կտորի շուկայում յուրաքանչյուր խաղափուլին մեկական ռուլոն կտոր վաճառել: Խաղաքարտի վրա, որը դու ստացել ես, ներկայացված են քո ծախսերը: Անցկացրու՛ դրանք աղյուսակի մեջ: Նպատակն է ստանալ հնարավորինս մեծ շահույթ:

Գործարքների ընդհանուր պատկեր			
Խաղափուլ	**Եկամուտ** Համաձայնեցված գին	**Ծախսեր** Խաղաքարտի արժեք	**Շահույթ** Եկամուտ-ծախսեր
1	.....	.....	.....
2	.....	.....	.....
3	.....	.....	.....
4	.....	.....	.....
5	.....	.....	.....
Արդյունք	.....	.....	.....

Գնորդի արդյունքների թերթիկ

Դու ուզում ես յուրաքանչյուր խաղափուլին մեկական ռուլոն կտոր գնել: Քո ստացած խաղաքարտի վրա գրված է այն գինը, որը դու պատրաստ ես վճարել: Անցկացրու՛ այն աղյուսակի մեջ: Նպատակն է ստանալ հնարավորինս մեծ շահույթ: Գումարի, որը սպառողը պատրաստ է վճարել, և գործարքի համար փաստացի համաձայնեցված գնի միջև տարբերությունը կոչվում է սպառողական ավելցուկ:

Գործարքների ընդհանուր պատկեր			
Խաղափուլ	**Գին, որը դու պատրաստ ես վճարել** Խաղաքարտի արժեք	**Փաստացի համաձայնեցված գին**	**Տարբերություն** Բյուջե-գին
1	.....	.....	.....
2	.....	.....	.....
3	.....	.....	.....
4	.....	.....	.....
5	.....	.....	.....
Արդյունք	.....	.....	.....

2 ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Սպառման մշակույթ

Սպառումն այսօր շատ երիտասարդների առօրյայի մաս է կազմում: Գիտնականները խոսում են անգամ անհատական սպառման մշակույթի մասին: Այն առաջ է բերում ավելի ու ավելի շատ կարիքներ, որոնք պետք է բավարարվեն ապրանքների սպառման միջոցով: «Գնումների գնալ» արտահայտությունն ուղղակի մոդայիկ խոսք չէ, այլ՝ հաճելի զբաղմունք, իսկ ոմանց համար դրա բացակայությունը՝ թերևս սթրեսի պատճառ:

Առօրյա կյանքի առևտրայնացում

Սպառման ցանկությունն ու սպառման փորձառությունը երիտասարդների կյանքի միակ որոշիչ բաղադրիչները չեն: Նրանց առօրյա կյանքն այսօր առևտրայնացված է, ինչն արտահայտվում է նրանով, որ առօրյայի շատ գործողություններ աստիճանաբար դառնում են վճարովի, իսկ անվճար այլընտրանք հազվադեպ է պատահում. նա, ով այսօր իրեն չի կարող բջջային հեռախոս թույլ տալ կամ գիտակցաբար հրաժարվում է դրանից, կարող է կամա թե ակամա դուրս մնալ մի շարք առօրյա միջոցառումներից, քանի որ երիտասարդների 90%-ն իրենց պայմանավորվածությունները կազմակերպում է բջջային հեռախոսի միջոցով: Ստացվում է, որ երիտասարդների գործունեության մի կարևոր ոլորտ՝ պայմանավորվելն ու տեղեկություններ փոխանակելը, կապված է որոշակի ծախսերի հետ (հմմտ. Քրուգ, Թուլի, Ֆիշեր 2010):

Գրպանի փող

Երիտասարդության կյանքի առևտրայնացումը հնարավոր է դարձել գրպանի փողի, գումարային տեսքով նվերների, ինչպես նաև իրենց կողմից իրականացված աշխատանքներից ստացած գումարի միջոցով, ինչն աստիճանաբար բարելավում է երիտասարդների ֆինանսական վիճակը: Այդ պատճառով մարքեթինգն ու գովազդը նպատակ են հետապնդում նոր արտադրանքներով և ռազմավարությամբ ազդել սպառողների հենց այս խմբի վրա:

Երիտասարդների կողմից իրականացվող աշխատանքներ

Այսօր երիտասարդներից շատերը հնարավորություն ունեն այս կամ այն կերպ գումար վաստակել, ինչի շնորհիվ նրանք ձեռք են բերում ֆինանսական անկախություն, որն իր հերթին բերում է «մեծերի աշխարհի ճանաչմանը» (հմմտ. Թուլի 2004, էջ՝ 418): Երիտասարդներն այլևս կախյալ չեն ընտանեկան բյուջեից և որոշ չափով կարողանում են ինքնուրույն օգտագործել իրենց տրամադրության տակ գտնվող միջոցները:

1 Պատասխանի՛ր հետևյալ հարցերին:

Քո առօրյան նո՞ւյնպես նույնքան պլանավորված ու առևտրայնացված է սպառումով: Եթե այո, ապա ո՞ր իրավիճակներում:	Ո՞ր իրավիճակներում ես դու քեզ զգում սահմանափակված՝ սպառմանը մասնակցել չկարողանալու տեսանկյունից:
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....
.....	.....

Երիտասարդների օրական գրպանի փողի օրինակներ	
6-18 տարեկան երիտասարդներն օրական ստանում են	
6-9 տարեկան	200 ՀՀ դրամ
10-13 տարեկան	300 ՀՀ դրամ
14-16 տարեկան	500 ՀՀ դրամ
17-18 տարեկան	1,000 ՀՀ դրամ

Անգամ եթե երեխաներն ու երիտասարդներն այսօր իրենց տրամադրության տակ ունեն ավելի շատ ֆինանսական միջոցներ, քան տասը տարի առաջ, նրանք չունեն ապատություն գնելու այն ամենը, ինչ ուզում են: Քաղաքացիական օրենսգրքով, որտեղից բերվել են ստորև ներկայացված պարբերությունները, կարգավորվում են գործունակությունը, անչափահասների գործունակությունը, ինչպես նաև անգործության հասկացությունները:

ՀՀ ՔՕ-ի (հոդված 24)
Գործունակություն

Անձի քաղաքացիական գործունակությունը լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Հոդվածի համապատասխան դրույթներով կարգավորվում են նաև անչափահասների գործունակ ճանաչվելու հիմունքները՝ կապված աշխատանքային պայմանագիր ունենալու, ձեռնարկատիրությամբ զբաղվելու կամ ամուսնության հետ:

ՀՀ ՔՕ-ի (հոդված 29)
Մինչև 14 տարեկան անչափահասների գործունակություն

Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ ստորև նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել՝

- մանր կենցաղային գործարքներ,
- նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ,
- օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:

Փոքրահասակի գործարքների համար գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը:

ՀՀ ՔՕ-ի (հոդված 30)
14-18 տարեկան անչափահասների գործունակություն

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ ստորև նշված գործարքների՝

- տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները,
- իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ,
- օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք,
- կնքել նախորդ հոդվածում սահմանված գործարքներ:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան կնքված իրենց գործարքներով:

ՀՀ ՔՕ-ի (հոդված 31)
Անգործունակություն

Անգործունակ կարող է ճանաչվել այն քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, ինչի պարագայում նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Գործունակ չի համարվում նաև այն անձը, ում 6 տարեկանը չի լրացել (հետևում է ՔՕ տրամաբանությունից):

2

Կարդա՛ հետևյալ օրինակները:

Մեկնաբանիր՝ արդյոք հետևյալ իրավական գործարքներն օրինական են, թե ոչ՝ փաստարկներ բերելով իրավական գործունակության վերաբերյալ քո գիտելիքից:

Լիլիթ, 15 տարեկան

Լիլիթը և իր ընկերուհիները այսօր կրկին դասերից հետո շրջում են քաղաքում: Քանի որ նրանք դեռ ոչինչ չեն կերել, գնում են արագ սննդի ռեստորան: Լիլիթը պատվիրում է համբուրգեր և հանքային ջուր:

Աննա, 6 տարեկան

Աննայի մայրիկը հանձնարարում է իր դստերը խանութից 5 թխվածքաբլիթ գնել: Այն, ինչ պետք է գնի Աննան, գրված է թղթի վրա:

Աննան վերցնում է այն գումարը, որ տվել էր մայրիկը թխվածքաբլիթ գնելու համար, գնում է սուպերմարկետ և գնում կոնֆետներ:

Դավիթ, 16 տարեկան

Դավիթը սիրում է համակարգչային խաղեր: Քանի որ նա գիտի, որ այս ամիս նոր համակարգչային խաղ է թողարկվելու, նա իր գրպանի փողից խնայել է 600 ՀՀ դրամ: Իր ծնողները, սակայն, կարծում են, որ նա չափազանց շատ է խաղում համակարգչային խաղեր:

Կարեն, 17 տարեկան

Կարենը 17 տարեկան է և ուզում է իր 18-րդ տարեդարձի կապակցությամբ վարորդական իրավունք ձեռք բերել: Նա ջանասիրաբար խնայել է և հիմա ուզում է վարորդական դպրոց դիմել:

Սյուզաննա, 16 տարեկան

Սյուզաննան ստիպված է անընդհատ իր մոտոցիկլետը տանել լիցքավորման: Աշխատանքի ճանապարհին էլ բավականին երկար է, իսկ հասարակական տրանսպորտի միջոցները, ցավոք, շատ անկանոն են երթևեկում:

Գոռ, 14 տարեկան

Գոռն ուզում է նոր բջջային հեռախոս գնել: Այն պետք է սմարթֆոն լինի, որը, սակայն, կարելի է գնել միայն պայմանագիր կնքելով: Իրավունք ունի՞ արդյոք Գոռը պայմանագիր ստորագրել:

3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Առկա սուղ ռեսուրսները ճիշտ օգտագործել պետք է կարողանան ոչ միայն ձեռնարկությունները, այլ նաև յուրաքանչյուր ընտանիք և անհատ: Տնտեսվարումը կապվում է առօրյայի անբաժան մաս: Լավ տնտեսվարելու համար անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում ունենալ եկամուտների և ծախսերի վերաբերյալ, այլապես կարելի է կուտակել ավելորդ պարտքեր կամ հակառակը՝ զրկվել խնայած գումարից տոկոսներ ստանալու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով դասագրքի այս գլխի նպատակն է օգնել ձևավորել ընդհանուր պատկերացում ֆինանսական տարաբնույթ իրավիճակների վերաբերյալ:



Այսօր ֆինանսական կառավարում իրականացնելն այդքան էլ դյուրին չէ, քանի որ անկանխիկ վճարային գործարքները սկսել են զբաղեցնել դրամապանակի դերը: Բանկային քարտերից չօգտվելու պարագայում բավական է հայացք գցել դրամապանակի պարունակությանը, և դուք կկարողանաք արագ պատկերացում կազմել ձեր ֆինանսական վիճակի մասին: Սակայն եթե վճարումները կատարում եք բանկային քարտով և պարբերաբար չեք ստուգում հաշվեկշիռը, ապա ձեր ֆինանսական միջոցները կարող են շատ արագ հասնել զրոյի:

Անձնական միջոցների ֆինանսական կառավարումը բարդ գործ է և մեծ կարգուկանոն է պահանջում, քանի որ հաճախ մեր եկամուտներն իրապես պարզ և տեսանելի են, իսկ ծախսերը՝ ոչ միշտ պլանավորված: Օրինակ՝ կարող ես լինել դրսում և հանկարծ զգալ սնվելու կարիք կամ էլ տեսնել որևէ գեղեցիկ հագուստ և ցանկանալ գնել այն: Հաճախ մարդիկ կարող են կատարել բացարձակ ավելորդ գնումներ՝ առանց հաշվի առնելու, թե ի վիճակի են արդյոք իրենց նման բան թույլ տալ: Ցավոք, փողն անսահմանափակ չէ, և կարևոր է այն ծախսել գիտակցաբար:

3.1 Ո՞ր տեսակին եմ պատկանում ես *

Հաշվի՛ր պատասխաններդ Ա, Բ,Գ տարբերակների քանակով:

Թեստի արդյունքները մի փոքր կպատմեն քեզ փողի հետ քո վարքի մասին:

Ո՞ր տեսակին եմ պատկանում ես	
Պատահե՞լ է արդյոք, որ դու գնումներ կատարելիս ավելի շատ ծախսես, քան պլանավորել էիր:	
Պատահել է, որ կանգնած լինեմ դրամարկղի մոտ, ցանկանամ վճարել բանկային քարտով, սակայն գործարքը մերժվի հաշվիս բավականաչափ գումար չունենալու պատճառով:	Գ
Ինձ հետ նման բան չի պատահել	Ա
Եթե որևէ մատչելի բան տեսնեմ, ապա ինչո՞ւ ոչ: Այդպես ես կարող եմ նաև գումար խնայել:	Բ
Դու տեսնում ես հիանալի շապիկ, սակայն աչք գցելով դրամապանակիդ՝ պարզում ես, որ չես կարող քեզ նման բան թույլ տալ:	
Մի քանի օր հետո կստանամ փող, իսկ մինչ այդ կսպասեմ:	Բ
Պետք է համբերել, հավանաբար այն շուտով ավելի մատչելի կդառնա:	Ա
Կխնդրեմ ծնողներիս ինձ կանխավճար տալ:	Գ
Դու մոռացել ես ընկերուհուդ դպրոցում կարևոր բան ասել:	
Հանում եմ հեռախոսս, ուղարկում եմ հաղորդագրություն, հետո կանգում եմ՝ տեսնելու, թե արդյոք ամեն բան կարգին է:	Գ
Զանգահարում եմ քաղաքային հեռախոսով, երբ տուն եմ գալիս:	Բ
Մենք միմյանց տեսնելու ենք մի քանի ժամ հետո: Այդ ժամանակ էլ ամեն բան կքննարկենք:	Ա
Տատիկդ և պապիկդ իրենց այցելության ժամանակ քեզ ծախսելու հավելյալ գումար են տալիս:	
Իրականացնում եմ ցանկություններիցս որևէ մեկը, իսկ մնացյալ գումարն ավելացնում եմ հաշվիս:	Բ
Հիանալի է: Ուրախ եմ, որ կարող եմ գնումներ կատարել:	Գ
Ես ողջ գումարն ավելացնում եմ խնայողական հաշվիս:	Ա
Կարիք կա՞ ծախսերը պլանավորելու:	
Ես այդքան էլ շատ գրպանի փող չեմ ստանում, սակայն այն ինձ միշտ բավականացնում է: Հետևաբար ինչո՞ւ պետք է ծախսերս պլանավորեմ:	Բ
Գրպանի փող ստանալիս միշտ մտածում եմ, թե ինչ ծախսեր ունեմ ամսվա ընթացքում, և թե էլ ինչ կարող եմ ինձ թույլ տալ:	Ա
Եթե այն չի բավականացնում, ապա կարող եմ պարտքով գումար վերցնել տատիկ-պապիկներիցս կամ էլ խնդրել ծնողներիս հաջորդ ամսվա գումարը տալ ինձ նախապես:	Գ

*Հիմնված է՝ FinanzgruppeBeratungsdienst Geld und Haushalt: Budgetkompass für Jugendliche, Ratgeberservice BUDGET

3.2 Եկամուտներ և ծախսեր ընտանիքում *

Ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած տվյալների՝ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին անվանական եկամուտը 2017-ին կազմել է 61,595 ՀՀ դրամ, իսկ վարձու աշխատանքի դիմաց վճարվող միջին աշխատավարձը՝ 177,817 ՀՀ դրամ: Ընդ որում, վարձու աշխատանքը կազմել է դրամական եկամուտների 52.2%-ը, պետական թոշակներն ու նպաստները՝ 16.1%-ը, ինքնակբաղվածությունը՝ 9.1%-ը, իսկ տրանսֆերները՝ 9.0%-ը: Ամենաքիչ մասը՝ 0.2%, ստացվել է վարձակալության վճարներից, տոկոսավճարներից և շահաբաժիններից: Հետաքրքրական է, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտներն ավելի կարևոր դեր են կատարում քաղաքային համայնքի ներկայացուցիչների համար, իսկ գյուղաբնակների համար վարձու աշխատանքի մասնաբաժինը 2017-ին 1.7 անգամ ցածր է եղել՝ համեմատած քաղաքային տնտեսությունների հետ: Ինչ վերաբերում է ոչ դրամական եկամուտներին, ապա դրանց հիմնական աղբյուրը սեփական տնտեսությունից սննդամթերքի սպառումն է (4.5%):

Տնային տնտեսությունների անվանական եկամուտը (2017թ.)

Տոկոսային բաշխվածություն



Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե:

Տնային տնտեսությունների ծախսերը (2017թ.)

Տոկոսային բաշխվածություն



Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե:

* Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Ա 1 **Վերջին շաբաթներին դու վարել ես ֆինանսական գրքույկ: Համեմատի՛ր քո եկամուտի և ծախսերի բաշխվածությունը Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հետ: Նախքան ծախսելը համախառն աշխատավարձից պետք է հանել եկամտային հարկը, կենսաթոշակային վճարը և դրոշմանիշային վճարը: Հաշվարկի՛ր մաքուր աշխատավարձը՝ լրացնելով աշխատավարձի հաշվարկաթերթիկը: Հաշվարկը պետք է իրականացվի համաձայն ստորև ներկայացված բացատրությունների:**

Աշխատավարձի հաշվարկաթերթիկ		
	Ամիս	Տարի
Համախառն եկամուտ	187,817 ՀՀ դրամ	
Հարկեր		
Եկամտային հարկ		
Կենսաթոշակային վճար		
Դրոշմանիշային վճար	1,000 ՀՀ դրամ	
Զուտ աշխատավարձ		

Բացատրություններ

Ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության՝ եկամտային հարկը հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Հայաստանի Հանրապետությունում գործում են եկամտային հարկի ամսական հետևյալ դրույքաչափերը.*

- Մինչև 150 000 ՀՀ դրամ գրանցված աշխատավարձի դեպքում հարկվող եկամտի 23%:
- 150,000 - 2,000,000 ՀՀ դրամ գրանցված աշխատավարձի դեպքում 34,500 ՀՀ դրամ գումարած 150,000 ՀՀ դրամը գերազանցող գումարի 28%:
- 2,000,000 ՀՀ դրամից ավելի գրանցված աշխատավարձի դեպքում 552,500 ՀՀ դրամին գումարած 2,000,000 ՀՀ դրամը գերազանցող գումարի 36%:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի հիմքում ընկած է 10%-ի սկզբունքը: Ըստ այդմ՝ ամսական անհրաժեշտ է կուտակել համախառն եկամտից 10%, որից 2,5%-ը հատկացվում է ամսական աշխատավարձից (բայց ոչ ավել, քան 12,500 ՀՀ դրամ) իսկ մնացած 7,5%-ը քաղաքացու փոխարեն վճարում է պետությունը:**

Հայաստանի Հանրապետությունում նաև գործում է «Դրոշմանիշային վճար» հասկացությունը, որը կինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով օրենքի սահմանած կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Ֆիզիկական անձանց պարագայում այն կազմում է ամսական 1,000 ՀՀ դրամ:

***Ներկայացված դրույքաչափերը կարող են փոփոխվել: Փոփոխություններին կարող եք ծանոթանալ ՀՀ Հարկային Օրենսգրքում:**

****Ներկայացված դրույքաչափերը կարող են փոփոխվել: Փոփոխություններին կարող եք ծանոթանալ Կուտակային Կենսաթոշակների Մասին ՀՀ Օրենքում:**

3.3 Անձնական ծախսերի ֆինանսական գրքույկ

Ա 1 Քո առաջադրանքն է եկող յոթ շաբաթների ընթացքում վարել անձնական եկամուտների և ծախսերի ֆինանսական գրքույկ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջին գրանցի՛ր քո եկամուտներն ու ծախսերը: Գրանցի՛ր դրանք համապատասխան կատեգորիաներում: Հաշվարկի՛ր եկամուտներդ ու ծախսերդ յուրաքանչյուր շաբաթվա համար:

Անձնական ծախսերի ֆինանսական գրքույկ							
Շաբաթ	Շաբաթ 1	Շաբաթ 2	Շաբաթ 3	Շաբաթ 4	Շաբաթ 5	Շաբաթ 6	Շաբաթ 7
Եկամուտներ							
Աշխատավարձ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Գրպանի փող	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Գումարային նվերներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Ընդամենը եկամուտներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Ծախսեր							
Ուտելիք և ըմպելիքներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Հեռախոս	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Հեծանվի ծախսեր	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Առցանց վճարովի խաղեր, ներբեռնումներ, երգեր, ֆիլմեր և այլն	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Մուտքի վճարներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Երթևեկության ծախս	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Նվերներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Գրենական պիտույքներ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Հագուստ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Գրքեր, ամսագրեր	.....	.....	.....	.....	.....	.....	.....
. . . . .	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Ընդամենը ծախսեր	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Մնացորդ	.....	.....	.....	.....	.....	.....	.....
Խնայողություն	.....	.....	.....	.....	.....	.....	.....

4 ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

«Ի՞նչ է հաշվեհամարը»:
«Հաշվեհամարը կարելի է պատկերացնել բաց գրքի տեսքով, որտեղ մի էջի վրա քո անվան տակ նշված է, թե ումից ես դու գումար ստացել, իսկ մյուս էջին այն նշումներն են, որոնք ցույց են տալիս, թե ում ես գումար վճարել»:

«Երբ ես հաշվարկում եմ մուտքերն ու ելքերը, կարո՞ղ եմ միշտ տեսնել՝ արդյոք հաշվիս մնացորդը դրական է, թե ունեմ պարտքեր»:
«Դու ստիպված չես դա հաշվել ինքդ, քանի որ այն երևում է քո հաշվի քաղվածքի վրա»:

«Իսկ ինչպե՞ս կարելի է կատարել անկանխիկ վճարումներ»:
«Դրա համար գոյություն ունի ընթացիկ հաշիվ: Սա մի հաշիվ է, որը ծառայում է հատուկ քո անկանխիկ մուտքերի և ելքերի համար: Այս հաշվի օգնությամբ գումարը «շրջանառվում է», այսինքն՝ մի հաշվից փոխանցվում մյուսին: Ընթացիկ հաշվով կատարված բոլոր գործարքներն արտացոլվում են հաշվի քաղվածքի մեջ: Շատ կարևոր է կանոնավոր կերպով հետևել հաշվի քաղվածքներին և ստուգել, թե արդյոք հաշվիդ դեռ կա գումար, որը կարող ես խնայել, կամ թե արդյոք քո ամսական ծախսերը գերազանցել են քո եկամուտները»:

«Ընթացիկ հաշիվ ունենալու համար պարտադի՞ր է արդյոք լինել չափահաս, թե՞ ես՝ որպես դպրոցական կարող եմ բացել ընթացիկ հաշիվ»:
«Անչափահասները կարող են հաշիվ բացել միայն տասնչորս տարին լրանալուց հետո: Սակայն մինչ 18 տարեկան դառնալը կարիք կա օրինական ներկայացուցչի՝ սովորաբար ծնողների համաձայնության»:

«Ի՞նչ գործարքներ ես կարող եմ իրականացնել իմ ընթացիկ հաշվով»:
«Քո ընթացիկ հաշվով դու կարող ես իրականացնել մանր կենցաղային գործարքներ (օրինակ՝ անկանխիկ եղանակով մարել բջջային հեռախոսի սպասարկման վճարը), տնօրինել քո աշխատավարձը և կրթաթոշակը»:

«Փաստորեն այս հաշիվը գործում է այնպես, ինչպես չափահասների հաշիվը»:
«Չափահասներն իրենց ընթացիկ հաշիվներով կարող են կնքել ցանկացած գործարք, օրինակ՝ կարող են վարկ ստանալ, իրականացնել միջազգային փոխանցումներ և այլն, մինչդեռ անչափահասների դեպքում ընթացիկ հաշվով իրականացվող գործարքների հնարավորությունը սահմանափակված է նախորդ կետում նշված գործարքների շրջանակով»:

1 Զրույցում դու ծանոթացար ընթացիկ հաշիվ հասկացությանը: Գրի՛ր ընթացիկ հաշվի մասին բոլոր առանձնահատկությունները, որոնք դու սովորեցիր ընթացիկ հաշվի մասին:

2 Այսօր գնալով ավելի են տարածվում անկանխիկ վճարումները: Ընկերոջդ հետ միասին նշի՛ր անկանխիկ վճարման գործընթացի տիպիկ դեպքեր:

4.1 Ինչպե՞ս բացել ընթացիկ հաշիվ

Հաշվի քաղվածքի ձևանմուշ

ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿ ԲԲԸ
Երևան, Հալաբյան 15/3

Հարցերի դեպքում՝ +374 10 39 25 68 (60 65)
firstbank@gmail.com

ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔ N 0006

Շողեր Սուրենի Կարապետյան
Ձևավորվել է՝ 03.04.2015, 12:31

Հաշվետու ժամանակաշրջան՝ 01.03.2015-31.03.2015 (31 օր)

Ձևանմուշ 6
(Հաշիվ)

Հաշվի համար՝ 1952 4444 5555 0103
Հաշվի արժույթ՝ AMD

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ 2016Թ-ԻՑ ԿԴԱՌՆԱ ՏԱՐԵԿԱՆ 4000 ԴՐԱՄ. 5000 ԴՐԱՄԻ ՓՈԽԱՐԵՆ:

Սկզբնական մնացորդ (01.03.2015դրությամբ)	Մուտքեր (ընդհանուր)	Ելքեր (ընդհանուր)	որից	Միջնորդավճար (գործարքներից և այլ)	Տուժանք (ընդհանուր)		Վերջնական մնացորդ (31.03.2015 դրությամբ)
125 520,00	+ 400 631,52	-78,00		-15,00	0		526 063,37
							որից հասանելի՝ 526 063,37

ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ/ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործարքներ, այլ գործառնություններ			Գործարքի գումար քարտի արժույթով		Կիրառվող փոխարժեք	Հաշվի վերջնական մնացորդ	Գործարքի նկարագրություն
Ամսաթիվ	Գումար	Արժույթ	Մուտք	Ելք			
02.03.2015	631,52	AMD	+631,52				Ցպահանջ ավանդի տոկոսի վճարում - "ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿ" ԲԲԸ
02.03.2015	63,15	AMD		-63,15			Եկամտահարկի գանձում - "ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿ" ԲԲԸ
02.03.2015	300 000,00	AMD	+300 000,00				Աշխատավարձի փոխանցում - "ՔՈՒԼ ՔՈԼ" ՍՊԸ, Երևան
						426 078,37	Մնացորդ-Օրվա վերջի դրությամբ հաշվի վերջնական մնացորդ
03.03.2015	15,00	AMD		-15,00			SMS միջնորդավճարի գանձում- "ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿ" ԲԲԸ
						426 063,37	Մնացորդ-Օրվա վերջի դրությամբ հաշվի վերջնական մնացորդ
30.03.2015	100 000,00	AMD	+100 000,00				Աշխատավարձի փոխանցում - "ՔՈՒԼ ՔՈԼ" ՍՊԸ, Երևան
						526 063,37	Մնացորդ-Օրվա վերջի դրությամբ հաշվի վերջնական մնացորդ

ՎԱՍՏԱԿԱԾ ԵԿԱՄՈՒՏՄԵՐ ԵՎ ԲՈՆՈՒՄՆԵՐ

Անվանում	Արժեք	Միավոր
Դրական մնացորդի դիմաց հաշվարկված տոկոսագումար	631,52	AMD
*Տարեկան անվանական տոկոսադրույք**	1	%
*Տարեկան տոկոսային եկամտաբերություն***	1,5	%

* Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում է ավանդի տոկոսագումարի մեծությունը:
** Այն տոկոսադրույքն է, որը ցույց է տալիս, թե որքան կկազմի Ձեր ավանդի եկամտաբերությունը Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու արդյունքում:

«Ի՞նչ պետք է ներկայացնեմ ընթացիկ հաշիվ բացելու համար»:

«Յուրաքանչյուր ոք, ով ուզում է ընթացիկ հաշիվ բացել, պետք է հաստատի իր անձը: Դրա համար անհրաժեշտ է, որ դու քեզ հետ վերցնես անձնագիր կամ քո անձը հաստատող այլ փաստաթուղթ, քանի որ բանկերը պարտավոր են ստուգել ապագա հաճախորդի անձի ինքնությունը: Դրանով բանկերը հավաստիանում են, որ ոչ ոք կեղծ անվամբ հաշիվ չի բացում դրանով հավանական չարաշահումներ իրականացնելու համար»:

«Ի՞նչ է գրված հաշվի բացման հայտի մեջ»:

«Քո ընթացիկ հաշիվը դու բացում ես հաճախորդների խորհրդատուի մոտ: Նա քեզ օգնում է լրացնել հաշվի բացման հայտը: Դրա համար նրան անհրաժեշտ են քո տվյալները, այսինքն՝ ազգանուն, անուն, հասցե, կբաղվածություն, ընտանեկան դրություն, ծննդյան ամսաթիվ և այլն: Ընթացիկ հաշիվ բացելու համար դու պիտի լինես առնվազն 18 տարեկան: Եթե դու 14-ից 18 տարեկան ես, ապա օրինական ներկայացուցիչները, որպես կանոն՝ ծնողները, պետք է գրավոր համաձայնություն տան, որպեսզի դու ներկայացնես հաշվի բացման դիմում: Եթե դու, սակայն, արդեն աշխատում ես և ուզում ես աշխատավարձի համար բացել հաշիվ, ապա կարող ես դա անել ինքնուրույն, եթե ներկայացնես աշխատանքային պայմանագիր»:

«Բանկը ո՞րտեղից գիտի, որ փոխանցումը կատարել եմ ես»:

«Բանկային հաշվի բացման ավարտին դու ստորագրում ես պայմանագիր և միաժամանակ տալիս ես ստորագրության նմուշ: Երբ դու ապագայում ուզում ես փոխանցում կատարել, բանկը կարող է ստուգել, թե արդյոք այն քո անունից է իրականացվել՝ համեմատելով քո ստորագրության նմուշը փոխանցման վրա առկա ստորագրության նմուշի հետ»:

«Ինչպես կարող եմ իրականացնել բանկային առցանց գործարքներ»:

«Եթե ցանկանում ես բանկային հաշվիդ միջոցով օգտվել բանկային առցանց ծառայություններից, որպես կանոն պետք է ստորագրես մի լրացուցիչ պայմանագիր, որից հետո բանկը կակտիվացնի համապատասխան համակարգից/հավելվածից օգտվելու հնարավորությունը:

Էլ ինչի վրա է անհրաժեշտ ուշադրություն դարձնել

Ընթացիկ հաշիվ բացելիս պետք է հաշվի առնել մի քանի հիմնական պայմաններ:

Լիազորություններ

Միայն բանկային հաշվետերն ունի իր հաշիվը տնօրինելու՝ օրինակ՝ գումար կանխիկացնելու կամ փոխանցումներ կատարելու իրավունք: Միևնույն ժամանակ, հաշվետերը կարող է իր հաշիվների տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված լիազորագրերի հիման վրա:

Հաշվի քաղվածք

Ընթացիկ հաշվի բոլոր փոփոխությունների, ինչպես նաև հաշվի մնացորդի մասին տեղեկություններ տրամադրվում են հաշվի քաղվածքների միջոցով: Դրանք հնարավոր է ստանալ բանկում կամ դիտել առցանց:

Հաշվի քաղվածքի վրա մի սյունակում ներկայացվում են հաշվից ելքագրված գումարները: Գումարները, որոնք մուտքագրվել են հաշվին, ներկայացված են սյունակի ձախ կողմում: Հաշվի վերջնական մնացորդը կարելի է տեսնել քաղվածքի ներքևի աջ կողմում: Ուշադի՛ր եղեք. եթե այդ գումարի մոտ դրված է «մինուս» նշանը, ապա Ձեր հաշվի մնացորդը բացասական է: Հիմնականում ելքերն ու մուտքերը ներկայացված են իրար տակ՝ ըստ ժամանակագրության:

Օվերդրաֆտ

Ի՞նչ անել, եթե ամսվա վերջում մեծ գնումներից հետո հաշվի մնացորդը չի բավականացնում հետագա ծախսերի համար: Նման դեպքերում բանկերն առաջարկում են այսպես կոչված օվերդրաֆտ: Սրա միջոցով հաճախորդն առանց նախնական ծանուցման կամ թղթաբանության կարող է իր հաշիվը գերազանցել նախապես պայմանավորված (նախապես կնքված վարկային պայմանագրի հիման վրա) առավելագույն գումարի չափով: Օվերդրաֆտ տրամադրելու նախապայման է հանդիսանում կայուն եկամուտն ու հաճախորդի չափահաս լինելու հանգամանքը:

Ձևաթղթեր

Ընթացիկ հաշվով մեկ այլ անձի, ընկերության կամ պետական մարմնի անկանխիկ վճարում կատարելու համար օգտագործվում են տարբեր ձևաթղթեր: Այս ձևաթղթերը առնվազն պետք է պարունակեն օրենսդրությամբ սահմանված ամբողջ տեղեկատվությունը:

Բանկային առցանց գործարքներ

Բանկային առցանց գործարքներ իրականացնելիս օգտագործվում են էլեկտրոնային ձևաթղթեր, որոնք տեսքով շատ նման են թղթային ձևաթղթերին:

4.2 Դրամական փոխանցումներ

Ինչպե՞ս կատարել դրամական փոխանցումներ

Դրամական փոխանցումը հնարավորություն է տալիս կատարելու միջոցների փոխանցումներ բանկային, փոստային համակարգի և փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների օգնությամբ: Դրամական փոխանցումներ հնարավոր է կատարել տարբեր երկրներ և տարբեր արժույթներով: Դրամական փոխանցումների համակարգի միջոցով դու կարող ես գումար փոխանցել ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող քո մտերիմներին, հարազատներին, գործընկերներին, կազմակերպություններին և այլն: Դրամական փոխանցումը հնարավոր է կատարել՝

→ բանկային հաշվի միջոցով,

→ առանց բանկային հաշվի բացման:

Բանկային հաշվի միջոցով դրամական փոխանցումներ

Այս եղանակով դրամական փոխանցում կատարելու համար նախ պետք է բացել բանկային հաշիվ: Բանկային հաշվի միջոցով դրամական փոխանցում կատարելու համար անհրաժեշտ է՝

- դիմել քո սպասարկող բանկին և նախապես պարզել անհրաժեշտ սպասարկման վճարների, միջնորդավճարների առկայությունը,
- ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ,
- լրացնել և ներկայացնել վճարման հանձնարարական,
- հայտնել ստացողին փոխանցված գումարի չափը, ինչպես նաև այդ գումարից գանձվող սպասարկման վճարների չափը (առկայության դեպքում):

Բանկային հաշվով դրամական փոխանցման ստացում

Բանկային հաշվով դրամական փոխանցում ստանալու դեպքում անհրաժեշտ է՝

- ներկայանալ սպասարկող բանկ,
- համապատասխան աշխատակցին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ,
- հայտնել աշխատակցին քո բանկային հաշվի համարը,
- ստուգել՝ արդյոք քո բանկային հաշվին փոխանցված գումարի չափը համապատասխանում է փոխանցողի կողմից նշված գումարին,
- պահանջել փոխանցված գումարը:

Առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումներ

Փոխանցումներ հնարավոր է իրականացնել նաև առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումներ իրականացնող համապատասխան համակարգերի միջոցով: Առանց բանկային հաշվի փոխանցում իրականացնելու համար, անհրաժեշտ է

- դիմել փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը,
- պարզել, թե դրամական փոխանցումների իրականացման որ համակարգով է կատարվելու փոխանցումը,
- պարզել, թե որքան ժամանակում կկատարվի փոխանցումը,
- ճշտել, թե որքան է դրամական փոխանցման համար սահմանված սպասարկման վճարը, այսինքն՝ որքան ես վճարելու փոխանցումը իրականացնելու համար, որքան գումար է գանձվելու փոխանցումը ստացողից,
- փոխանցվող գումարը և սպասարկման վճարը մուծել դրամարկղում,
- դրամական միջոցը ստացողին հայտնել փոխանցվող գումարի չափը (առանց սպասարկման վճարների), փոխանցման «ստուգողական» համարը և այն համակարգի անունը, որով կատարվել է փոխանցումը:

Փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից տրվում է «ստուգողական» համար, որը դու պետք է հայտնես գումարը ստացողին: «Ստուգողական» համարը անհրաժեշտ է, որպեսզի բանկը հավաստիանա, որ գումարը ստացողը հենց այն անձն է, ում փոխանցվել է գումարը:

Առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների ստացում

Առանց հաշվի բացման դրամական փոխանցում ստանալիս անհրաժեշտ է՝

- եթե փոխանցողը նշել է որոշակի կազմակերպություն, պետք է ներկայանալ փոխանցողի կողմից նշված հասցեով փոխանցման կետ,
- եթե փոխանցողը չի նշել որևէ կազմակերպություն, փոխանցողից պարզել, թե որ համակարգով է կատարվել փոխանցումը, ճշտել, թե որ կազմակերպություններն են իրականացնում տվյալ համակարգով փոխանցումներ և ներկայանալ համապատասխան կազմակերպություն,
- համապատասխան աշխատակցին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ,
- աշխատակցին հայտնել այն համակարգի անվանումը, որով իրականացվել է փոխանցումը,
- աշխատակցին ներկայացնել ուղարկողի հայտնած փոխանցման «ստուգողական» համարը,
- համապատասխան աշխատակցից վերցնել փոխանցումը ստանալու հայտը: ստուգել, թե ստացվելիք գումարի չափը համապատասխանում է արդյոք փոխանցողի կողմից նշված գումարին,
- եթե վերը նշված պայմաններն անթերի կատարվել են, ստորագրել և ստանալ գումարը:

Վճարման հանձնարարականի ձևանմուշ ակգային վճարումների համար

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 0401002

" " 201 թ.

Վճարող՝ ՀՎՀՀ -	ԴԵԲԵՏ հշ.N	ԳՈՒՄԱՐ (AMD)
Վճարողի բանկը՝ Բանկի կոդ	ԿՐԵԴԻՏ հշ.N	օրվա տույժ
Ստացող՝ ՀՎՀՀ - Ստացողի բանկը՝ Պետ.գանձապետարան Բանկի կոդ	հշ.N	գումարը տույժով %-ից
Փոստով-հեռագրով (ընդգծել) Գումարը բառերով՝ դրամ		Գործ.տեսակ Վճար.նշան. Վճար.ժամկ. Հերթ.վճար. Քղ.բանկի N
Ապրանքի ստացման,կատարված ծառայության Ա/Թ		
Վճարման նպատակը,կատարված ծառայությունների,աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN.		

Կ.Տ. Հաճախորդի ստորագրություններ՝ _____ Անցկացված է բանկով

« ___ » _____

_____ Բանկի ստորագր.՝ _____

4.3 Ուղղակի դեբետագրում իրականացնելու գործընթացը

Իսկ ինչպե՞ս վարվել վճարումների հետ, որոնք պետք է կատարվեն կանոնավոր կերպով, բայց դրանց չափը միշտ տարբեր է, ինչպես օրինակ՝ հեռախոսի հաշիվը:



Նման դեպքերի համար կա ուղղակի դեբետագրում իրականացնելու գործընթացը: Այս գործընթացի ժամանակ վճարելու պարտականություն ունեցող անձը լիազորում է վճարը ստացողին բանկային իր հաշվից գանձել համապատասխան գումարը:

Հեռախոսի հաշվի վճարման դեպքում գործընթացը տեղի է ունենում հետևյալ կերպ. վճարողը հեռախոսային ընկերությանը տալիս է թույլտվություն ամեն ամիս իր հաշվից գանձելու հեռախոսի հաշվի համապատասխան գումարը: Առավելությունն այն է, որ ժամկետներին ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն չկա, ինչի շնորհիվ կարող ես, օրինակ, անհոգ մեկնել երկար արձակուրդի: Ուղղակի դեբետագրում իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- դիմել քո սպասարկող բանկին և նախապես պարզել անհրաժեշտ սպասարկման վճարների, միջնորդավճարների առկայությունը,
- քեզ սպասարկող բանկին ներկայացնել ուղղակի դեբետագրման հրահանգ՝ 2 օրինակից, որից մեկ օրինակը բանկի ստորագրությամբ տրամադրվում է քեզ,
- դրամական միջոցները ստացողին տեղեկացնել, որ ուղղակի դեբետագրման հրահանգը ներկայացվել է քեզ սպասարկող բանկին, որից հետո ստացողը քեզ սպասարկող բանկին ներկայացնում է վճարման հանձնարարական: Տեղեկացումը կարող է իրականացվել նաև ստացողի սպասարկող բանկի միջոցով,
- շահառուի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա քեզ սպասարկող բանկը իրականացնում է փոխանցում՝ սահմանված պարբերականությամբ և ժամկետներում:

ՈՒՂՂԱԿԻ ԴԵԲԵՏԱԳՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ N

Ներկայացման ամսաթիվ ___ _____ 200 թ.

Ա Վճարող

Բ Վճարողի բանկ

Գ ՀՎՀՀ կոդը

Դ ԴԵԲԵՏ

Ե Շահառու

Զ Շահառուի բանկ

Է ԿՐԵԴԻՏ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ (թվերով)

ԱՐԺՈՒՅԹ (կոդով)

Ը ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ, ԱՐԺՈՒՅԹ (բառերով)

Թ Գործարքի նպատակը

Ժ Վճարման հաճախականությունը (ամսական / եռամսյակային / տարեկան)

Ի Վճարման ժամանակահատվածի սկիզբը

Լ Վավերության ժամկետ ___ _____ 200__թ. մինչև ___ _____ 200__թ.

Խ Տեղեկացում շահառուին / շահառուի բանկին

Վճարողի կնիքը և ստորագրությունը
/_____/
Ա կարգի ստորագրություն
/_____/
Բ կարգի ստորագրություն
Կ. Տ.

Վճարողի բանկի դրոշմակնիքը և աշխատակցի ստորագրությունը
___ _____ 200 __ թ.
ստացման ամսաթիվ
/_____/
Բ կարգի ստորագրություն
Կ. Տ.

Շահառուի բանկի դրոշմակնիքը և աշխատակցի ստորագրությունը
___ _____ 200 __ թ.
կատարման ամսաթիվ
/_____/
Բ կարգի ստորագրություն
Կ. Տ.

Ա Այստեղ նշվում է վճարողի անունը, անվանումը

Բ Այստեղ նշվում է վճարողի բանկի անվանումը

Գ Այստեղ նշվում է վճարողի հարկ վճարողի հաշվառման համարը

Դ Այստեղ նշվում է դեբետագրվող հաշիվը՝ վճարողի հաշվի համարը վճարողի բանկում

Ե Այստեղ նշվում է ստացողի անունը, անվանումը

Զ Այստեղ նշվում է ստացողի բանկի անվանումը

Է Այստեղ նշվում է կրեդիտագրվող հաշիվը՝ ստացողի հաշվի համարը վճարողի բանկում

Ը Այստեղ նշվում է առավելագույն գումարը, որ վճարողի բանկը իրավասու է փոխանցել

Թ Այստեղ նշվում է գործարքի նպատակը, օրինակ՝ կոմունալ ծառայությունների վճար

Ժ Այստեղ պետք է նշվի, թե ինչ հաճախականությամբ պետք է իրականացվի վճարումը, օրինակ, ամսական, եռամսյակային և այլն

Ի Այստեղ պետք է նշվի վճարման ժամանակահատվածի սկիզբը՝ այն ամսաթիվը, երբ այս հանձնարարականը պետք է առաջին անգամ իրականացվի

Լ Այստեղ պետք է նշվի ուղղակի դեբետագրման գործընթացի վավերության՝ գործողության ժամկետը

Խ Այստեղ պետք է նշում կատարել, եթե ստացողին ուղղակի դեբետագրման հրահանգի մասին տեղեկացնելու ես վերջինիս բանկի միջոցով

Ուղղակի դեբետագրման հանձնարարական



ՈՒՂՂԱԿԻ ԴԵԲԵՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N

«___» _____ 200__ թ.
Ներկայացման ամսաթիվ

Հիմք՝ Ուղղակի դեբետագրման հրահանգ N

Վճարող
Վճարողի բանկ
ՀՎՀՀ կոդը
ԴԵԲԵՏ

ԳՈՒՄԱՐ (թվերով)
ԱՐԺՈՒՅԹ(կոդով)

Հանձնարարականի ներկայացման եղանակ
Էլեկտրոնային
Թղթային

Շահառու
Շահառուի բանկ
ԿՐԵԴԻՏ

ԳՈՒՄԱՐ,ԱՐԺՈՒՅԹ (բառերով)

Գործարքի նպատակը

Վճարողի Բանկի դրոշմակնիքը և աշխատակցի ստորագրությունը

«___» _____ 200_թ
ստացման ամսաթիվ

Կ.Տ

/_____/
Բ կարգի ստորագրություն

Շահառուի կնիքը և ստորագրությունը

/_____

/_____/
Բ կարգի ստորագրություն

Կ.Տ

Շահառուի բանկի դրոշմակնիքը և աշխատակցի ստորագրությունը

«___» _____ 200_թ
ամսաթիվ

/_____/
Բ կարգի ստորագրություն

Կ.Տ

4.4 Պարբերական վճարումների հանձնարարական

Ակումբների անդամավճարներ, վարձավճարներ, ապահովագրական և նմանատիպ մի շարք այլ վճարները կարող են կրել կանոնավոր բնույթ և ունենալ հստակ սահմանված դրույքաչափեր:

Բավականին ժամանակատար կլիներ, եթե ամեն ամսվա սկզբին ստիպված լինենք լրացնել փոխանցումների բոլոր ձևաթղթերը: Այդ պատճառով նման դեպքերում հաճախորդների մեծ մասն իրենց բանկին են տրամադրում պարբերական վճարումների հանձնարարականներ: Սա փոխանցման հատուկ ձև է, որով բանկային հաշվի տերը իր բանկին հանձնարարում է կանոնավոր կերպով՝ նախապես սահմանված ժամկետում (օրինակ՝ ամեն ամսվա առաջին օրը), կատարել փոխանցում, որը պետք է կրի շարունակական բնույթ մինչ հանձնարարականի դադարեցումը կամ փոփոխումը (օրինակ՝ սպորտային ակումբը կարող է բարձրացնել անդամավճարը): Այս գործընթացի արդյունքում վճարումները կատարվում են ժամանակին՝ խուսափելով ուշացումներից: Պարբերական վճարման հանձնարարականները բանկերն իրականացնում են հատուկ ձևաթղթով:





ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N

Ա Ներկայացման ամսաթիվ ---- ---------- 2000 թ.

Բ Ուժի մեջ է մինչև ---- ---------- 200- թ.

Գ Կատարման սկիզբը և պարբերականությունը (շաբաթական, ամսական, եռամսյակային, տարեկան) _____

Դ Վճարող

Ե Վճարողի բանկ

Զ ՀՎՀՀ կոդը

Է ԴԵԲԵՏ

Ը Շահառու

Թ Շահառուի բանկ

Ժ ԿՐԵԴԻՏ

ԳՈՒՄԱՐ (թվերով)

Արժույթ

ԳՈՒՄԱՐ (բառերով)

Ի Վճարման նպատակը

Բանկի դրոշմակնիքը և աշխատակցի ստորագրությունը

Վճարողի կնիքը և ստորագրությունը

Ա կարգի ստորագրություն

Կ.Տ.

Բ կարգի ստորագրություն

4 ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ա	Այստեղ նշվում է հանձնարարականի ներկայացման ամսաթիվը
Բ	Այստեղ նշվում է այն ամսաթիվը, մինչև որն ընկած ժամանակահատվածում հանձնարարականն ուժի մեջ է գտնվելու
Գ	Այստեղ նշվում է վճարումների կատարման սկիզբը և պարբերականությունը, որտեղ հստակորեն պետք է նշված լինի, թե որ օրվանից է սկսվելու վճարի կատարումը վճարողի բանկի կողմից, և ինչպիսի պարբերականությամբ է այն կրկնվելու
Դ	Այստեղ նշվում է վճարողի անունը, անվանումը
Ե	Այստեղ նշվում է վճարողի բանկի անվանումը
Զ	Այստեղ նշվում է վճարողի հարկ վճարողի հաշվառման համարը
Է	Այստեղ նշվում է դեբետագրվող հաշիվը՝ վճարողի հաշվի համարը վճարողի բանկում
Ը	Այստեղ նշվում է ստացողի անունը, անվանումը
Թ	Այստեղ նշվում է ստացողի բանկի անվանումը
Ժ	Այստեղ նշվում է կրեդիտագրվող հաշիվը՝ ստացողի հաշվի համարը վճարողի բանկում
Ի	Այստեղ նշվում է գործարքի նպատակը, օրինակ՝ ակումբի անդամավճար

Փոխանցում, պարբերական վճարումների հանձնարարական և ուղղակի դեբետագրում

Ա 1 Գրանցի՛ր քո որոշումը ստորև և հիմնավորի՛ր այն

		Փոխանցում	Պարբերական վճարումների հանձնարարական	Ուղղակի դեբետագրում	Հիմնավորում
Ա	Ֆիթնես-ակումբում Արմենի անդամակցության գումարը կազմում է ամսական 12 000 ՀՀ դրամ:	○	○	○	....
Բ	Հայկը առցանց մի խանութում պատվիրել է կիսաթև վերնաշապիկ: Վճարման ժամանակ նա կարող է շատ այլ հնարավորությունների մեջ նաև ընտրություն կատարել փոխանցման և ուղղակի դեբետագրման միջև:	○	○	○	....
Գ	Պարոն Գրիգորյանը վարձել է երեք սենյականոց բնակարան: Ամսական վարձը կազմում է 90 000 ՀՀ դրամ:	○	○	○	....
Դ	Պարոն Գրիգորյանը հեռախոսակապի ընկերության հաճախորդ է: Նա ցանկանում է վճարել իր հաշիվները՝ հնարավորինս քիչ ջանք գործադրելով:	○	○	○	....
Ե	Տիկին Գոհարը բաժանորդագրվել է մի թերթի: Անդամավճարը պետք է վճարել ամեն ամիս:	○	○	○	....
Զ	Խորենը կուսակցության անդամ է: Տարեկան մեկ անգամ նա պետք է վճարի իր անդամավճարը:	○	○	○	....
Է	Սյուզաննան դետեկտիվ վեպ է պատվիրել առցանց գրախանութից:	○	○	○	....

«Եթե ես ունեմ ընթացիկ հաշիվ, ապա կարո՞ղ եմ անմիջապես ստանալ վճարային քարտ ապագայում անկանխիկ վճարումներ կատարելու համար»:

«14 տարեկանից սկսած՝ հնարավոր է ձեռք բերել վճարային քարտեր, իսկ ավելի փոքր տարիքի երեխաների համար ծնողները կարող են բանկից պատվիրել իրենց քարտային հաշվին կցված քարտեր՝ ընտանիքի բոլոր անդամների անուններով: Կան բանկային քարտերի մի քանի տեսակներ, որոնք ծառայում են տարբեր նպատակների՝ դեբետային քարտեր, կրեդիտային քարտեր և հաշվարկային քարտեր»

«Որո՞նք են դեբետային, կրեդիտային և հաշվարկային քարտերի տարբերությունները»:

- «Դեբետային քարտ. օգնում է առանց բանկ այցելելու կառավարել և օգտագործել քո բանկային հաշվին առկա սեփական միջոցները, այդ թվում՝ կանխիկացնել, գնումներ կատարել: Հիմնականում տրամադրվում է այն ժամանակ, երբ ցանկանում ես օգտագործել քո աշխատավարձը կամ այլ սեփական միջոցները, որոնք մուտքագրվել են քո բանկային հաշվին:
- Վարկային քարտ (նաև կրեդիտային քարտ). նախատեսված է բանկի կողմից վարկի ձևով տրամադրված դրամական միջոցները օգտագործելու՝ կանխիկացնելու, առևտուր կատարելու կամ ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու նպատակով:
- Հաշվարկային քարտ. միավորում է դեբետային և կրեդիտային քարտերի հատկանիշները: Օրինակ՝ դեբետային քարտով հնարավորություն է ընձեռնվում նաև ստանալ օվերդրաֆտ»:

«Ի՞նչ տեղի կունենա, եթե ես քարտը կորցնեմ: Այդ դեպքում իմ բանկային հաշիվը հասանելի՞ կլինի յուրաքանչյուրին»:

«Ո՛չ: Հիմնականում քարտը կարող է օգտագործվել միայն PIN կոդի միջոցով: Այդ «նույնականացման անձնական համարը», որը կարճ PIN է կոչվում, փոխարինում է ստորագրությանը: PIN-ը պետք է հիշել, քանի որ այն նշված չէ քարտի վրա: PIN-ը չի կարելի հայտնել որևէ մեկին, ի դեպ, այն չգիտեն նաև բանկի աշխատակիցները:

«Իսկ ի՞նչ պիտի անեմ PIN-ով»:

«Դու այն պիտի մուտքագրես վճարման սարքի վրա, որպեսզի կարողանաս քարտով անկանխիկ վճարումներ կատարել»:

«Իսկ ինչպե՞ս կարող եմ խանութում քարտով վճարել»:

«Դա աշխատում է այսպես. դրամարկղի տերմինալի մոտ հաճախորդի քարտը դրվում է քարտ ընթերցող սարքի մեջ, ինչի արդյունքում կապ է հաստատվում ընթացիկ հաշվի հետ: Այնուհետև հաճախորդը ստեղնաշարի օգնությամբ մուտքագրում է PIN-ը: Եթե քարտը արգելափակված չէ, և դրա վրա առկա են բավարար միջոցներ, ապա տեղի է ունենում վճարման ենթակա գումարի էլեկտրոնային դեբետագրում»: Դու կարող ես վճարումներ կատարել այն բոլոր խանութներում, որտեղ առկա է քո քարտի վրա նշված վճարային համակարգի նշանը, օրինակ՝ ArCa, Visa կամ MasterCard:

«Ընկերներիցս մեկն ասում է, որ հնարավոր է քարտով վճարումներ կատարել նաև առանց ընթերցող սարքի մեջ տեղադրելու: Ինչպե՞ս է դա հնարավոր»:

«Այդ տեխնոլոգիան անվանվում է PayWave (Visa-ի քարտերի համար) և PayPass (MasterCard-ի քարտերի համար): Սովորաբար կիրառվում է գումարային սահմանաչափ, օրինակ՝ 10 000 ՀՀ դրամ, որից ցածր արժեքով գնումների համար կարող ես պարզապես մոտեցնել քարտը այն POS տերմինալներին, որոնց վրա կա այս նշանը»:

4.5 Բանկային առցանց գործարքներ

Տարեց տարի ավելի շատ մարդիկ են օգտվում բանկային առցանց ծառայություններից, որը հնարավորություն է տալիս արագ և առանց խնդիրների կառավարել ֆինանսական միջոցները՝ անկախ քո գտնվելու վայրից:



Մեկ քլիք, և ամեն ինչ աչքի առաջ է: Բանկային առցանց գործարքների ժամանակ փոխանցումներն ու պարբերական վճարումների հանձնարարականներն իրականացվում են հարմարավետ՝ մկնիկի մեկ քլիքի միջոցով: Բացի այդ, բանկային առցանց ծառայություններն առաջարկում են՝

- Շուրջօրյա հասանելիություն հաշվի քաղվածքին,
- Ընթացիկ հաշվի արագ հասանելիություն,
- Հարմարավետ կիրառում պլանշետով, սմարթֆոնով կամ համակարգչով,
- Ճկունություն աշխարհի յուրաքանչյուր անկյունում,
- Բանկային հաշվի առցանց վարման հնարավորություն,
- Անվտանգության բարձր ստանդարտներ:

Բանկային առցանց ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ ընթացիկ հաշիվ, որի համար ակտիվացված է բանկային առցանց ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Հայաստանյան բանկերի մեծամասնությունն իրենց հաճախորդներին առաջարկում են նմանատիպ բանկային ծառայություններ, որոնց շնորհիվ հնարավոր է իրականացնել բազմաթիվ գործարքներ՝ մուտք գործելով համապատասխան ծրագիր կամ հավելված:

Համացանցի միջոցով գործարքների իրականացման ժամանակ հատկապես կարևոր է անվտանգությունը: Այդ պատճառով հաճախորդից պահանջվում է մուտքագրել ոչ միայն իր օգտագործողի անունը և գաղտնաբառը, այլ նաև այսպես կոչված TAN-ը (Transaction authentication number), որը կարելի է ստանալ թոքենի գեներացրած համարով կամ բջջային հաղորդակցության միջոցով, այլապես գործարքը չի համարվի վավեր: Այդ իսկ պատճառով TAN-ը կարևոր դեր է կատարում բանկային առցանց գործարքների անվտանգության համար: Ներկայումս բանկերի կողմից առաջարկվում են TAN ստանալու երկու հիմնական տարբերակներ՝ smsTAN կամ pushTAN:

smsTAN-ի գործընթացը

smsTAN-ի գործընթացի ժամանակ, որը հայտնի է նաև 3D Secure անվանմամբ, TAN-ը ուղարկվում է բջջային այն հեռախոսահամարին, որը կցված է բանկային ձեր տվյալներին: Գործընթացը տեղի է ունենում հետևյալ կերպ.

- Սկզբում համակարգչի կամ պլանշետի վրա լրացվում է, օրինակ, փոխանցման համար նախատեսված բանկային առցանց գործարքների պատուհանը և հաստատվում: Հաստատումից մի քանի վայրկյան անց բջջային հեռախոսին գալիս է SMS հաղորդագրություն:
- SMS հաղորդագրության մեջ նշված է TAN-ը, որը, մուտքագրելով համակարգ, հաճախորդը թույլ է տալիս գումարի գանձումն իր հաշվեհամարից:

pushTAN-ի գործընթաց

pushTAN-ի գործընթացի ժամանակ TAN-ը ստանում ես հատուկ հավելվածի միջոցով անմիջապես բջջային հեռախոսի վրա: Այսպիսով՝ այս գործընթացի ժամանակ կիրառվում է միայն մեկ սարք: Հավելվածը կարելի է անվճար ներբեռնել AppStore-ից կամ էլ Google Play Store-ից:

Այս գործընթացը տեղի է ունենում հետևյալ կերպ.

- Սկզբում համակարգչի կամ պլանշետի վրա լրացվում է, օրինակ, փոխանցման համար նախատեսված բանկային առցանց գործարքների պատուհանը և հաստատվում:
- Այնուհետև անցում է կատարվում համապատասխան հավելվածին և մուտքագրվում գաղտնաբառը, որից հետո հավելվածի կողմից ստացվում է TAN, որը վավերական է միայն տվյալ հանձնարարականի համար:
- Հավելվածի միջոցով ստացված TAN-ը, մուտքագրելով համակարգ, հաճախորդը թույլ է տալիս գումարի գանձումն իր հաշվեհամարից:

Անկախ նրանից, թե քո բանկն ինչ գործընթաց է առաջարկում, խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել անվտանգության հետևյալ կանոններին.

7 կանոն առցանց գործարքների համար

1 **Գաղտնաբառը պիտի մնա գաղտնի**
Նույնականացման միջոցները, որոնք բանկային առցանց գործարքի օգտատերը ստանում է բանկից, անվտանգության կարևոր բաղադրիչ են: Այդ տվյալները պիտի գաղտնի պահվեն և կարող են մուտքագրվել միայն քո բանկի կողմից առաջարկվող առցանց գործարքների պաշտոնական էջում: Խորհուրդ է տրվում չպահպանել PIN-ը և TAN-ը բանկային առցանց գործարքների ծրագրերում և չօգտագործել ինտերնետային բրաուզերի կողմից առաջարկվող գաղտնաբառի պահպանման մենեջերները:

2 **Վստահելը լավ է, վերահսկելը՝ ավելի լավ**
Անտեսի՛ր էլեկտրոնային նամակները, որոնցով պահանջվում է հետ ուղարկել քո մուտքանունը/գաղտնաբառը կամ գրանցվել ինտերնետային որևէ կայքում (այսպես կոչված ֆիշինգը): Շատ կարևոր է ֆայրվոլի (Firewall) կամ հակավիրուսային ծրագրերի օգտագործումը, որոնք պիտի մշտապես թարմացված լինեն:

3 **Վնասակար ծրագի՞ր՝ ո՛չ, շնորհակալ եմ**
Հակավիրուսային ծրագրերի առկայության հետ մեկտեղ յուրաքանչյուր օգտատեր պիտի ուշադրություն դարձնի միայն ծանոթ, ապահով աղբյուրներից ծրագրեր և փաստաթղթեր ներբեռնելուն կամ բացելուն: Անծանոթից ստացված էլեկտրոնային նամակին կից ֆայլը կամ ինտերնետային որոնման համակարգերի միջոցով գտնված ֆայլերը կարող են պարունակել վնասակար ծրագրեր: Զգո՛ւյշ եղեք. վիրուսային ծրագրերը շատ արագ են հայտնվում համակարգչում:

4

Ներդնել ծրագրերի միայն ակտուալ տարբերակները

Համակարգչի օպերացիոն համակարգը կամ ծրագրերը երբեք անթերի չեն: Խնդիրներից որոշները չնայած կայրացնող են, բայց՝ անվնաս, մյուսները՝ հակառակը չեն խանգարում օգտագործմանը, սակայն անվտանգության տեսանկյունից չափազանց վտանգավոր են: Ծրագրեր արտադրողները ջանում են իրենց հայտնաբերած սխալներն ուղղել թարմացումների (Updates) կամ նորացված տարբերակների միջոցով: Ցավոք հենց տան համակարգիչների դեպքում հաճախ անտեսվում է ծրագրերի մասին հոգ տանելը, այնպես որ թարմացված բարելավումները (Patches) առհասարակ չեն տեղադրվում (Install) կամ ճիշտ ժամանակին չեն տեղակայվում համակարգիչ: Նույնը, վերաբերում է նաև հակավիրուսային ծրագրերի ներդրմանը: Այս դեպքում խորհուրդ է տրվում կանոնավոր կերպով թարմացնել դրանք: Հակառակ դեպքում օգտատիրոջ անվտանգությունը վտանգված կլինի :

5

Ուշադրություն դարձրու՛ ինտերնետային ճիշտ հասցեին

Անվտանգության համար կարևոր ինտերնետային կայքերի օգտագործման, ինչպես նաև բանկային առցանց գործարքների և առցանց խանութներից օգտվելու պարագայում անվտանգության կարևորությունը գիտակցող օգտատերերը մշտապես ձեռքով են մուտքագրում ինտերնետային հասցեն: Եթե ընտրում ես հարմարավետ ճանապարհը և հետևում հղմանը կամ ինտերնետային բրաուզերում բացում ես Bookmark ֆունկցիան, ապա խորհուրդ է տրվում գոնե հետո ստուգել, թե արդյոք ցույց տրվող հասցեն իսկապես ճիշտ է:

6

Փոխանցի՛ր տվյալներն ապահով կերպով

Եթե 5-րդ կետի կանոնով ինտերնետային հասցեի ճշգրտությունը հաստատվել է, ապա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ինտերնետային բրաուզերի և հասցեագրված ինտերնետային սերվերի միջև կապը պաշտպանված է երրորդ անձերի «հետաքրքրասեր հայացքներից»: Վերջինս ապահովելու համար գործի է դրվում SSL (Secure Sockets Layer) գաղտնագրային արձանագրությունը, որը կարելի է ճանաչել հասցեի համար նախատեսված դաշտում https: պրոտոկոլային անունից, ինչպես նաև՝ կողպեքի նշանից: Փակ կողպեքը ապդանշան է այն բանի, որ անցումը անվտանգ է, տվյալները՝ լրտեսումից պաշտպանված:

7

Վկայականի ստուգում

SSL արձանագրություն առաջարկել կարողանալու համար ինտերնետային սերվերը պիտի գրանցված լինի հատուկ ընկերությունում: Այս ընկերությունները ստուգում են ինտերնետային սերվերի ինքնությունը և տալիս նույնականացման փաստաթուղթ՝ այսպես կոչված վկայական: Կողպեքի նշանի վրա քլիք անելիս առկա SSL արձանագրության պարագայում ցույց են տրվում վկայականի կարևորագույն տվյալները: Առաջնահերթ է ստուգել, թե արդյոք մատնահետքը համընկնում է homepage-ի տվյալներին: Հնարավոր է վկայական ստեղծել նաև առանց գրանցման: Սակայն ինտերնետային բրաուզերները դրանք ճանաչում են և զգուշացնում օգտատիրոջը: Հաճախ այս զգուշացումներն ընկալվում են որպես ոչ կարևոր հաղորդագրություններ և անտեսվում են օգտատիրոջ կողմից: Դրանք կարող են, սակայն, վտանգ պարունակել: Վկայականներին վերաբերող զգուշացումների դեպքում պետք է լինել չափազանց ուշադիր:

Ի դեպ, անհրաժեշտ է նշել.
Ոչ միայն բանկային առցանց գործարքներն են այս կանոնների վրա ուշադրություն դարձնելու միջոցով ավելի ապահով դառնում, այլ նաև ինտերնետային այլ գործողությունները, ինչպիսիք են առցանց խանութներից կամ առցանց աճուրդներից օգտվելը:

5 ԽՆԱՅՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ

5.1 Որքա՞ն գումար է ծախսվում և ինչի՞ վրա

Տնային տնտեսություններն ունեն բազմաթիվ պատճառներ գումար խնայելու համար: Այս պատճառները տարբերվում են ոչ միայն տնային տնտեսությունից տնային տնտեսություն, այլև կարող են փոփոխվել մարդու կյանքի ընթացքում: Հետևյալ հարցումը պարզաբանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնայելու հիմնական նպատակները:

Խնայման հիմնական նպատակներ



Աղբյուր՝ «Հայաստանի բնակչության ֆինանսական ունակությունները 2014» հետազոտություն:

Ըստ նույն հետազոտության արդյունքների՝ Հայաստանի բնակչության 52.9%-ն իր ողջ եկամուտը ծախսում է ընթացիկ կարիքները հոգալու վրա, ինչի արդյունքում խնայելու կամ կուտակելու գումար չի մնում: Հարցվածների միայն 13%-ն է ինչ-որ գումար առանձնացնում նախքան ծախսելը, իսկ 29.6%-ը նախընտրում է խնայել այն, ինչ մնում է ընթացիկ կարիքները հոգալուց հետո

Ա1 Ձեր դասարանում խնայողության պատճառները և նպատակները բնականաբար տարբեր են: Հարցում անցկացրե՛ք՝ յուրաքանչյուրդ թերթիկի վրա նշելով խնայելու երեք նպատակ, այնուհետ նշե՛ք դրանք գրատախտակի վրա և քննարկե՛ք միասին: Վերոնշյալ գծապատկերին ի՞նչ նպատակներ կավելացնեիք:

Ա2 Երրորդ բաժնում դու կազմել ես քո անձնական ծախսերի ֆինանսական գրքույկը: Հաշվի՛ր խնայողությունների տոկոսը՝ խնայողություններդ հարաբերելով եկամուտներիդ և բազմապատկելով 100-ով:

Վերլուծի՛ր քո անձնական ծախսերի ֆինանսական գրքույկը՝ ըստ հետևյալ չափանիշների.

→ Ամսական հաստատուն ծախսեր, օրինակ՝ հեռախոսի վճար ըստ պայմանագրի
→ Ամսական փոփոխական ծախսեր, օրինակ՝ կինոյի տոմսեր
→ Խնայողությունների ներուժ

5.2 Խնայումը որպես վճռորոշ գործոն

Խնայումը որպես վճռորոշ գործոն							
Ֆին. Կապիտալ (ՀՀ դրամ)	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ավանդներ առևտրային բանկերում	1 023,1 մլրդ	1 212,1 մլրդ	1 612,4 մլրդ	1 757,5 մլրդ	1 951,1 մլրդ	2 413,4 մլրդ	2 624,5 մլրդ
Պարտատոմսեր	5 373,8 մլն	4 183,5 մլն	15 101,4 մլն	33 345,2 մլն	12 082,3 մլն	53 821,4 մլն	65 101,3 մլն
Բաժնետոմսեր	200,3 մլն	413,1 մլն	1 494,5 մլն	28 772,1 մլն	4 313,1 մլն	20 510,7 մլն	12 057,4 մլն
Կենսաթոշակային ֆոնդեր	-	-	4,161 հազար	12 126,3 մլն	31 510,7 մլն	63 342,2 մլն	105 634,8 մլն

Աղբյուր՝ www.cba.am և www.amx.am

Խնայելու համար գոյություն ունեն ներդրման մի քանի տարբերակներ՝ խնայողական հաշիվներ, ավանդներ, արժեթղթեր և այլն:

Խնայողական հաշիվ

Խնայողական հաշիվ ասելով՝ հասկանում ենք գումարի խնայում բանկային ընթացիկ կամ խնայողական հաշվի վրա, որի դիմաց դու ստանում ես որոշակի տոկոսներ:

Խնայողական հաշվի դեպքում դու ցանկացած պահի կարող ես ավելացնել գումար քո խնայողական հաշվին կամ հանել արդեն իսկ ներդրված գումարները:

Խնայողական հաշիվը բավականին հարմար լուծում է նրանց համար, ովքեր ուզում են գումար խնայել, սակայն ցանկանում են ունենալ ճկունություն և ինքնուրույն որոշել՝ երբ հանել կամ ավելացնել գումարը:

Խնայողական հաշվի առավելություններն ու թերությունները	
Առավելություններ	Թերություններ
Կարող ես ներդնել ցանկացած գումար, նույնիսկ՝ փոքր գումարներ	Հարաբերականորեն ցածր տոկոսադրույք
Ցանկացած պահի կարող ես ավելացնել գումար կամ հանել արդեն իսկ ներդրված գումարը	
Ապահով խնայման ձև է	
Գումարային մուտքն ու ելքն անվճար են	
Ներդրված գումարի դիմաց ստանում ես որոշակի տոկոսներ	

Ժամկետային ավանդ

Ժամկետային ավանդը պայմանագիր է, որի համաձայն դու կարող ես որոշակի ժամկետով գումար ներդնել բանկում և դրա դիմաց ստանալ տոկոսագումարներ: Ժամկետային ավանդի դեպքում ներդրված գումարը հետ ես ստանում պայմանագրով նախատեսված ժամկետի վերջում, օրինակ՝ 6 ամիս, մեկ տարի անց: Պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում դու իրավունք ունես ցանկացած պահի պահանջել ներդրված գումարը, սակայն այս դեպքում բանկը կարող է փոփոխել նախապես սահմանված տոկոսադրույքը: Այդ իսկ պատճառով, համեմատած խնայողական հաշվի հետ, ժամկետային ավանդի դիմաց կստանաս զգալիորեն ավելի բարձր տոկոսներ: Ընդ որում, որքան ավելի երկար է ժամկետը, այնքան ավելի բարձր է տոկոսադրույքը: Տոկոսադրույքի չափը երբեմն պայմանավորված է նաև ներդրված գումարի չափով (որքան ավելի մեծ է գումարը, այնքան ավելի բարձր է տոկոսադրույքը), ինչպես նաև ներդրված գումարի արժույթով:

Ժամկետային ավանդի առավելություններն ու թերությունները

Առավելություններ	Թերություններ
Ավելի բարձր տոկոսադրույք, քան խնայողական հաշվի դեպքում	Ժամկետից շուտ պայմանագրի դադարեցման դեպքում բանկի կողմից տոկոսադրույքի փոփոխության հնարավորություն
Ապահով խնայման ձև է	Որպես կանոն՝ առկա է նվազագույն գումարի պահանջ, օրինակ՝ 50 000 ՀՀ դրամ

Ավանդների հատուցման երաշխավորում

Բանկում ներդրված գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հետևյալ չափով՝

Ավանդի արժույթը և գումարի չափը	Երաշխավորված ավանդի չափը
Միայն դրամային ավանդ	Երաշխավորվում է մինչև 10մլն ՀՀ դրամ
Միայն արտարժույթով ավանդ	Երաշխավորվում է մինչև 5մլն ՀՀ դրամ
Դրամային և արտարժութային ավանդ և դրամային ավանդի գումարը 5մլն ՀՀ դրամից ավել է	Երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10մլն ՀՀ դրամ չափով
Դրամային և արտարժութային ավանդ և դրամային ավանդի գումարը պակաս է 5մլն ՀՀ դրամից	Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ 5մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով

Կայուն եկամտաբերությամբ արժեթղթեր՝ պարտատոմսեր

Պարտատոմսի սեփականատերն ունի իրավունք պայմանավորված ժամկետի վերջում ստանալ ներդրված գումարը՝ անվանական արժեքով: Բացի այդ պարտատոմսի սեփականատերը երաշխավորվում է ստանալ նաև տոկոսներ արժեթղթի անվանական արժեքից:

Պարտատոմսերի մեջ բավականաչափ ներդրում կատարելու պարագայում՝ հավանաբար հնարավոր է ապրել դրանցից ստացված տոկոսներով: Եթե ներդրողը ցանկություն ունի պարտատոմսերն անվանական արժեքի վերածել նախքան պարտատոմսի մարման ժամկետը, իր ներդրված գումարը կարող է հետ ստանալ տվյալ օրվա շուկայական արժեքով: Պարտատոմսերն այսպիսով նույնպես ունեն շուկայական գնի որոշակի ռիսկ: Սակայն հաշվի առնելով, որ այդ ռիսկն այնքան էլ բարձր չէ, և առկա է կայուն տոկոսադրույք, դրանք ձեռք բերելն ավելի հուսալի ներդրում է, քան բաժնետոմսեր ձեռք բերելը:

Պարտատոմսերը հետաքրքիր են հատկապես նրանց համար, ովքեր միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումներ իրականացնելիս ցանկանում են համատեղել հարաբերականորեն բարձր ապահովվածությունը բարձր եկամտաբերության հնարավորությունների հետ:

Պարտատոմսերի առավելություններն ու թերությունները	
Առավելություններ	**Թերություններ**
Ժամկետը լրանալուց հետո ներդրված գումարն անվանական արժեքով ստանալու հնարավորություն	Պարտատոմս թողարկած ձեռնարկությունում որոշումներ կայացնելու իրավունքի բացակայություն, շահաբաժին ստանալու հնարավորության բացակայություն
Բորսայում ցուցակված պարտատոմսերի պարագայում՝ ցածր շուկայական տոկոսադրույքի փուլերում շահույթի հնարավորություն	Բորսայում ցուցակված պարտատոմսերի պարագայում՝ ժամկետից շուտ գնման կամ վաճառքի դեպքում շուկայական ռիսկեր
Կայուն տոկոսադրույք	Բորսայում չցուցակված պարտատոմսերի պարագայում՝ սահմանափակ իրավունքներ՝ կախված սահմանված ժամկետից
Գրավիչ հավելյալ իրավունքներ փոխարկելի պարտատոմսերի պարագայում	Շահույթը նվազեցնող ծախսեր, ինչպես, օրինակ, պարտատոմսերի վարման համար վճարներ, միջնորդավճարներ

Բաժնետոմսեր

Բաժնետոմսերի սեփականատերը ձեռնարկության բաժնետեր է: Նա կարող է մասնակցել բաժնետերերի ժողովներին և մասնակցություն ունենալ կայացվող որոշումներին: Դրանից բացի նոր բաժնետոմսերի թողարկման պարագայում՝ նա կարող է կիրառել իր բաժնետիրական իրավունքը: Ամենագրավիչը, սակայն, բաժնետոմսերից ստացվող եկամտի հնարավորություններն են: Եթե բիզնեսը շահութաբեր է, ապա բաժնետերերը ստանում են այդ շահույթից որոշակի մաս՝ շահաբաժնի տեսքով: Բացի այդ, բարձր բիզնես կատարողականը խթանում է բաժնետոմսի արժեքը. բաժնետոմսի վաճառքը գնային նպաստավոր ժամանակահատվածում կարող է բերել բարձր շահույթ:

Կա մի բայց. որքան ավելի բարձր են շահույթի հնարավորությունները, այնքան ավելի մեծ են նաև ռիսկերը: Շահաբաժնից ստացված եկամուտը կարող է վրոյանալ, իսկ բաժնետոմսի արժեքը՝ ընկնել: Հետևաբար բաժնետոմսերում ներդրումներ պլանավորողները պետք է տեղեկանան ձեռնարկության վիճակի և տնտեսական իրավիճակի հեռանկարների մասին: Ռիսկի դիվերսիֆիկացման նպատակով՝ խորհուրդ է տրվում գնել տարբեր ձեռնարկությունների բաժնետոմսեր:

Խորհուրդ է տրվում ձեռք բերել տարբեր ոլորտների ձեռնարկությունների բաժնետոմսեր, որոնց շահութաբերությունը կախում չունի միմյանցից: Ձեռնարկությունների ընտրությունն ազդում է ներդրման ապահովության և շահութաբերության վրա: Նորաստեղծ և վարգացող ձեռնարկությունները, որպես կանոն, ունեն շահույթի բարձր հնարավորություններ, բայց նաև առավել մեծ ռիսկեր, քան մեծ և արդեն կայացած ձեռնարկությունների բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի առավելություններն ու թերությունները

Առավելություններ	Թերություններ
Ձեռնարկությունում որոշումներ կայացնելու իրավունք	Գնային ռիսկերի առկայություն՝ գնելիս կամ վաճառելիս
Շահաբաժնի ստացում	
Արժեքի հնարավոր բարձրացում	
Ցանկացած պահի բաժնետոմսերը վաճառելու հնարավորություն	

Խնայման այս տարբերակներից որևէ մեկի ընտրությունն այդքան էլ հեշտ չէ: Ընտրություն կատարելիս որոշիչ են հետևյալ կարևոր հարցերը՝

- Որքա՞ն ժամանակով եմ ուզում ներդնել գումար, այսինքն՝ որքա՞ն ժամանակով կարող եմ հրաժարվել ունեցածս գումարից:
- Պատրա՞ստ եմ ռիսկի գնալ գումար ներդնելիս, թե՞ ակնկալում եմ, որ ես իմ ներդրած գումարը վստահաբար ամբողջապես հետ կստանամ:
- Փոքր ռիսկի դիմաց պատրա՞ստ եմ արդյոք հրաժարվել բարձր շահութաբերությունից:

Այսպիսով, ներդնելիս պետք է հաշվի առնել ներդրման ապահովությունը, շահութաբերությունն ու ներդրված գումարի հասանելիությունը: Քանի որ հնարավոր չէ միաժամանակ ապահովել բոլոր երեք գործոնները, խոսում ենք ներդրման մոգական եռանկյան մասին:

Գնահատի՛ր ներդրման ձևերն ըստ «ապահովության», «հասանելիության» և «շահութաբերության» կատեգորիաների՝ օգտագործելով «բարձր», «միջին» և «ցածր» բնորոշումները:

Ներդրումների դասակարգում									
	ապահովություն			հասանելիություն			շահութաբերություն		
	բարձր	միջին	ցածր	բարձր	միջին	ցածր	բարձր	միջին	ցածր
Քարտային խնայողություններ									
Ընթացիկ հաշիվ									
Խնայողական հաշիվ									
Ժամկետային ավանդ									
Պարտատոմս									
Բաժնետոմսեր									

Ա2 Ներդրման ձևերն ավելացրու՛ «մոգական եռանկյունուն» այնպես, որ դրանց կապը «ապահովություն», «հասանելիություն» ու «շահութաբերություն» կատեգորիաների հանդեպ լինի հստակ: Այսպես օրինակ՝ եթե հասանելիությունն ու շահութաբերությունը բարձր են, իսկ ապահովությունը՝ ցածր, ապա եռանկյունու վրա ավելացրու՛ ներդրման համապատասխան ձևը հասանելիությանն ու շահութաբերությանը մոտ:

Մոգական եռանկյունի



Ա3 Քննարկե՛ք ներդրման երեք ձևերը ֆինանսատնտեսական ճգնաժամի տեսանկյունից, որը ցնցեց աշխարհը 2008 թվականին:

5.3 Տոկոսը որպես որոշիչ գործոն

Պատկերացրու՝ քո ծննդյան օրն է, ու դու ստանում ես 10,000 ՀՀ դրամ՝ որպես նվեր: Տեղի է ունենում հետևյալը ա) դու գումարը դնում ես որևէ գրքի մեջ, որը քեզ նույնպես նվիրել են, և գտնում ես այն միայն քառասուն տարի անց, բ) դու 40 տարով ներդնում ես գումարդ որևէ բանկում՝ խնայողական հաշվի վրա: Ինչ ես կարծում՝ որքա՞ն կլինի ա և բ տարբերակների տարբերությունը, եթե խնայողական հաշվի տոկոսադրույքը կազմում է 2%:

Եթե կապիտալը ներդրվում է մեկից ավելի տարով, ապա, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա վերջին հաշվարկվում են տոկոսներ և ավելացվում մայր գումարին: Հաջորդ տարվա համար տոկոսներն ավելանում են արդեն նախորդ տարվա մայր գումարի և նախորդ տարում կուտակված տոկոսի հանրագումարին և այդպես շարունակ՝ մինչև վերջնաժամկետ: Սա կոչվում է բարդ տոկոս:

Եթե ուզում ես իմանալ, թե գումարը քսան տարի հետո որքան կլինի, այդ հարցում կարող է օգնել հետևյալ բանաձևը: Բարդ տոկոսի հաշվման բանաձևը հետևյալն է՝

$$K_{\text{տոկոսներով}} = K_{\text{սկզբնական}} \times \left(1+\frac{\rho}{100}\right)^{n}$$

Ընդ որում՝

→ $K_{\text{տոկոսներով}}$-ը վերջնական կապիտալն է (տոկոսների հետ միասին),

→ $K_{\text{սկզբնական}}$-ը նախնական կապիտալն է (առանց տոկոսների),

→ ρ%-ը տոկոսադրույքն է,

→ n-ը՝ տարիների քանակը:

Ա1 500,000 ՀՀ դրամ կապիտալ է ներդրվել 10 տարով և 7%-ով:

Ա2 Դու գիտես վերջնական կապիտալի և տոկոսադրույքի արժեքները: Վերջնական կապիտալը կազմում է 1,000,000 ՀՀ դրամ, իսկ տոկոսադրույքը՝ 8%:

Որքա՞ն կլինի կապիտալը 10 տարի անց:	Հաշվի՛ր նախնական կապիտալը, որը դու պետք է նեդնես, որպեսզի 6 տարի անց ունենաս 1,000,000 ՀՀ դրամ:
.....	.....

6 ՊԱՐՏՔ

6.1. Ի՞նչ է պարտքը:

1 Լրացրո՛ւ նախադասությունները:

Մարդիկ, ովքեր պարտք ունեն ...

.....

.....

.....

Ես չեմ կարող պարտք ունենալ, որովհետև ...

.....

.....

.....

Եթե ունես պարտք, նշանակում է, որ ...

.....

.....

.....

Ես նույնպես կարող եմ ինչ-որ մի օր ունենալ պարտք, քանի որ ...

.....

.....

.....

2 Համեմատի՛ր քո դատողությունները դասընկերոջդ դատողությունների հետ: Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ եք գտնում:

3 Հետևյալ դատողությունները հիմնված են «Թանկ երիտասարդներ» վերնագրով հետազոտության արդյունքների վրա, որը հրապարակել են Ֆրիսը, Գյոբելը և Լանգեն: Նշի՛ր այն դատողությունները, որոնց հետ համամիտ ես: Հիմնավորի՛ր քո դիրքորոշումը:

- Ես երբե՛ք պարտքեր չեմ ունենա
- Պարտք վերցնելը համընդհանուր խնդիր չէ
- Պարտքեր կուտակելու մեջ ինքդ ես մեղավոր
- Ես երբեք պարտքով գումար չեմ վերցնի
- Ես պարտք եմ իմ ընկերներին
- Հայաստանի Հանրապետությունն ունի պետական պարտք
- Պարտք ունենալը նորմալ է. Պարտք չունի միայն նա, ով չի ուզում կյանքը վայելել
- Ես պարտքեր չեմ վերցնում, քանի որ խնայում եմ ծերության օրերի համար
- Քանի դեռ եկամուտները բավարար են, պարտք վերցնելու անհրաժեշտություն չկա
- Ես դեմ չեմ պարտք վերցնելուն

6.2 Որո՞նք են պարտք վերցնելու դրդապատճառները:

Յուրաքանչյուր ոք կարող է պարտք ունենալ: Ոչ ոք բացառություն չի կազմում, և ցանկացած անձ հիմնականում ինչ-որ մի օր պարտք է վերցնում: Եթե երիտասարդներին հարցնես, թե ինչու են նրանք պարտք վերցնում, ապա շատերը չեն գիտակցում, որ իրենք իրականում առաջին անգամ պարտք են վերցնում ընկերներից, երբ, օրինակ, չեն կարողանում վճարել իրենց համբուրգերի համար: Կինոթատրոն այցելելը, ըմպելիք կամ հագուստ գնելը նույնպես կարող են դառնալ պարտք վերցնելու հաճախակի պատճառ:

Պետության պարտքերը անուղղակիորեն ևս քաղաքացիների պարտքերն են: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի 01.01.2018թ.-ի դրությամբ ունի 1,103,235 ՀՀ դրամի պարտք, և օրեցօր այն ավելանում է:

Պարտք վերցնելու պատճառները շատ տարբեր են: Սպառման մեծ ծավալից բացի հաճախ պատճառ է հանդիսանում ֆինանսական գիտելիքների բացակայությունը, որը հանգեցնում է պարտքերի:

Պարտք ունեցող ռեսպոնդենտների մոտ կեսը նշել է, որ պարտք արել է այնքան, որքան կարող էր իրեն թույլ տալ, մինչդեռ 40% պարտք է արել այնքան, որքան պետք է եղել

Հետևյալից ո՞րն է Ձեզ համար ճիշտ:
N=1536



Հետևյալից ձևակերպումներից ո՞րն է լավագույնս բնորոշում Ձեր կողմից վերցրած պարտքի գումարի չափը:
Մասնաբաժինը պարտք ունեցողների մեջ, N=639



Աղբյուր՝ «Հայաստանի բնակչության ֆինանսական ունակությունները 2014» ՀՀ կենտրոնական բանկ

0-10 սանդղակով՝ ըստ կարևորության, դասավորի՛ր երիտասարդների պարտք վերցնելու այն պատճառները, որոնք կարող են նաև քեզ վերաբերել: Քննարկի՛ր արդյունքները դասարանում:

6.3 Ովքե՞ր են պարտատերերը

Բանկերն ու վարկային կազմակերպությունները սովորաբար չեն տրամադրում վարկեր մինչև 18 տարեկան երիտասարդներին:

18-ից 24 տարեկան երիտասարդները կարող են ունենալ տարբեր բնույթի պարտքեր: Սա պայմանավորված է նրանով, որ չափահասներն իրավունք ունեն իրենց անունով կնքել պայմանագրեր, և էական չէ, թե խոսքը ինչ բնույթի պայմանագրի մասին է: Դա կարող է լինել հեռահաղորդակցման ընկերության հետ ժամկետային պայմանագիր կամ, օրինակ, որևէ ապրանքի գնման վերաբերյալ պայմանագիր: Չափահաս քաղաքացիները կարող են նաև ապրանքներ ձեռք բերել մասնավճարային հիմունքներով, ինչի պարագայում ընդունված է կատարել կանխավճար, իսկ մնացած պարտքը՝ մարել ամսական վճարումներով: Ընդ որում՝ սովորաբար քո պարտքի մարումից բացի պարտավորվում ես վճարել նաև որոշակի տոկոսներ:



6.4 Պարտքը ոչ միշտ է պարտք

Պարտքը ոչ միշտ է պարտք: Որքան բավական են անհատի պահանջմունքները, այնքան բավական է հաճախ նաև նրա պարտքերի կառուցվածքը: Այսօր սպառողական վարկերի օգնությամբ կարող ես քեզ թույլ տալ շատ ավելին, քան ներում են եկամուտներդ, սակայն ապագայում բանկին պետք է վերադարձնես ոչ միայն վերցրած գումարը, այլ նաև՝ տոկոսներ: Այդ պատճառով մինչև վարկ վերցնելը պետք է պատասխանել հետևյալ հարցին.«Արդյո՞ք ապրանքի գնումն այսօր այնքան կարևոր է, որ ես տարիներ շարունակ բանկին տոկոսներ վճարեմ պարտքի դիմաց»:

Տնտեսագիտության մեջ տարբերակվում են սպառողական ապրանքների ձեռքբերում և ներդրում հասկացությունները: Ներդրում կարելի է կատարել ապագայի ծախսերը կրճատելու կամ եկամուտ ստանալու մտադրությամբ: Մասնավոր կյանքում հաճախ իրականացվող ներդրումներից են ուսման համար կատարված ներդրումները կամ սեփականության ձեռքբերումը, որոնք սովորաբար համարվում են «լավ պարտքեր», սակայն հավվադեպ են հանդիպում: Կարևոր է նշել, որ ուսման համար կատարված ներդրումը կարող է դառնալ լավագույն որոշումը, քանի որ այն մեծացնում է ապագայում բարձր եկամուտներ ստանալու հնարավորություններն ու հետևաբար նաև ավելի հեշտացնում պարտք վերցրած գումարի վերադարձը: Այստեղ գործում է հետևյալ կարգախոսը. «Կրթությունը միայն այն դեպքում է դիտարկվում ներդրում, երբ դրա արդյունքում ձեռք է բերվում նուո-հաու (Know-how)՝ հետագա աշխատանքային կյանքի համար»: «Վատ պարտքերը» ձևավորվում են սպառողական ապրանքների ձեռք բերման արդյունքում:



Ա1 Բոլոր օրինակներում երիտասարդները պիտի պարտք վերցնեն: Ո՞ր դեպքերում է խոսքը ներդրման մասին:
Հիմնավորի՛ր քո որոշումը:

Օրինակ	Այո	Ոչ	Հիմնավորում
Ա Դավիթը աշխատանքի ընդունման հարցազրույցի համար իր խնայողություններից գնում է իր առաջին կոստյումը:			
Բ Կարինեն դպրոցին վուգահեռ հաճախում է նաև իտալերենի դասընթացի, քանի որ լեզուն նրան դուր է գալիս:			
Գ Գոռը գնում է մի մոտոցիկլետ, որպեսզի դրանով գնա իր համալսարան, որտեղ նա կրթություն է ստանում է:			
Դ Աննան գնում է ջինսե մի տաբատ և շապիկ, քանի որ հանգստյան օրերին հրավիրված է երեկույթի:			

6.5 Վարկ

Հաճախ մարդիկ ցանկանում են գնել որևէ բան, որի համար չունեն բավարար խնայողություններ, ինչի պարագայում նրանք կարող են վերցնել վարկ, եթե գնելու ցանկությունը գերակայում է:



Այս դասագրքի շրջանակներում «Վարկ» բառը վերաբերում է հետևյալ երեք սահմանումներին.

- պարտքերը կանոնավոր կերպով մարելու ունակության և պատրաստակամության հանդեպ վստահություն,
- սահմանված ժամկետով գնողունակության տրամադրում,
- որպես կապիտալ տրամադրված գումար:

Վարկային կազմակերպություններն ու բանկերը «վարկ» հասկացության տակ հասկանում են սահմանված ժամկետում տոկոսների դիմաց գումարի տրամադրում: Տոկոսները տրամադրված կապիտալի օգտագործման համար վճարվող փոխհատուցումն են: Որպես «վարկ» հասկացության այլընտրանք օգտագործվում է նաև «փոխառություն» հասկացությունը:

1 Բլոկ-սխեման փորձում է ներկայացնել վարկ վերցնելու վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացը՝ ժամանակագրական և տրամաբանական հաջորդականությամբ: Այդ նպատակով վարկի վերաբերյալ որոշման կայացման գործընթացը բաժանվում է առանձին քայլերի, որոնցից յուրաքանչյուրի արդյունքում հանգում ես տարբեր որոշումների:

Ի՞նչ վերջնական որոշման ես հանգում, երբ ուզում ես գնել կինոթատրոնի տոմս, մեքենա կամ մտածում ես սովորել որևէ կրթական հաստատությունում: Հիմնավորի՛ր քո պատասխանները:

6.6 Վարկավորման իրավական հիմքերը

Վարկ ստանալու իրավասություն

Վարկ ստանալու իրավասություն ունենում ես լիարժեք գործունակության ձեռք բերման, այսինքն՝ 18-ամյակդ լրանալուն պես:

Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենք

Հայաստանի Հանրապետությունում սպառողական վարկավորման վերաբերյալ հիմնական դրույթները կարգավորվում են Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ Օրենքով (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կենտրոնական բանկի մի շարք իրավական ակտերով:

Ըստ Օրենքի համապատասխան դրույթների՝ սպառողական կրեդիտավորման պայմանագրի համար գործում են նաև հետևյալ կարևոր պահանջները.

Վարկային պայմանագրի կնքում

- Կնքվում է գրավոր:
- Հաճախորդը պարտադիր ստանում է կրեդիտավորման պայմանագրի մեկ բնօրինակ:

Վարկային պայմանագրի նվազագույն դրույթներ

- Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի մասին նշում:
- Վարկ ստանալու համար պահանջվող օժանդակ ծառայությունների գնի մասին նշում (ապահովագրություն, գնահատում և այն):
- Հաճախորդի կողմից իր պարտավորությունները չըկատարելու/ոչ պատշաճ կատարելու համար բանկի /վարկային կազմակերպության կողմից կիրառվող պատասխանատվության միջոցները (տույժեր և այլն):

Վարկի վճարումների վերաբերյալ դրույթներ

- Հաճախորդն իրավունք ունի մարել իր պարտավորությունները ժամկետից շուտ:
- Ժամկետից շուտ վարկը մարելու դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը:
- Վարկի մարումներն ուշացնելու դեպքում կիրառվում են տույժեր, որոնց չափը սահմանափակ է:

Վարկի լուծման վերաբերյալ դրույթներ

- Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վերոնշյալ դեպքում հաճախորդը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար բանկին/վարկային կազմակերպությանը վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են վարկային պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վարկային պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:



6.7 Վարկունակություն

Վարկ ստանալու համար, բացի իրավասություն ունենալը, հաճախորդը պետք է լինի նաև վարկունակ: Վարկունակ են այն անհատները, որոնք ունեն ցանկություն և կարողություն համաձայն պայմանագրի պատշաճ կերպով կատարել իրենց վարկային պարտականությունները, մասնավորապես, ժամանակին մարել վարկը և կատարել վարկի հետ կապված բոլոր ծախսերը: Ըստ տարածված տեսության՝ վարկունակությունը ներկայացվում է 5 C-երով:

1. Character - վարկային «բնավորություն», այլ կերպ՝ վարկային պատմություն
2. Capacity - կարողություն
3. Capital - ունեցվածք/կապիտալ
4. Collateral - գրավ, երաշխիք
5. Conditions - այլ պայմաններ

Վարկային պատմություն

Հաճախորդի վարկունակության գնահատման և վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելիս բանկերը և վարկային կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում հաճախորդի վարկային պատմությանը: Վարկային պատմությունը ցույց է տալիս, թե հաճախորդը ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները: Վարկային պատմությունը ներառում է, մասնավորապես, հետևյալ տեղեկատվությունը՝

- Ստացած վարկերը, դրանց քանակը և գումարը, յուրաքանչյուր վարկի տեսակը և ժամկետները,
- Վարկից բխող մարումների կատարումը (օրինակ՝ արդյո՞ք ժամանակին ես վճարել տոկոսներն ու մայր գումարի մարումները, թե ոչ),
- Հաճախորդի կողմից այլ մարդկանց տրամադրված երաշխավորությունները, ժամկետանց վարկերի առկայությունը, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքները,
- Չվճարված կամ ուշացված կոմունալ վճարները,
- Վերջին վեց ամսում հաճախորդի կողմից ստացած աշխատավարձի միջին չափը:

Հաճախորդի վարկային պատմության մեջ ներառվում են միայն հարցման պահից վերջին 5 տարվա վերաբերյալ տվյալները: Վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է ԱԲՌԱ վարկային բյուրոյում և ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրում: Ըստ այդմ, յուրաքանչյուր բանկ/վարկային կազմակերպություն մինչև վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելը կարող է ստանալ հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն՝ դիմելով վերոնշյալ կառույցներին: Կարևոր է նշել, որ հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ միայն վերջինիս գրավոր համաձայնության դեպքում: Բացի բանկերից և վարկային կազմակերպություններից, յուրաքանչյուր անձ կարող է անձամբ դիմել և ծանոթանալ իր վարկային պատմությանը:

Հետաքրքրական է նշել, որ Հայաստանի բնակչության պարտք ունեցողների 33%-ն ասում է, որ ոչ միշտ է ժամանակին մարում վարկերը (ՀՀ ԿԲ «Հայաստանի բնակչության ֆինանսական ունակությունները -2014» հետազոտության արդյունքներ):

Կարողություն

Ստուգվում են նաև հաճախորդի եկամուտները և ծախսերը. որքա՞ն աշխատավարձ է նա ստանում, ի՞նչ կողմնակի եկամուտներ ունի, որքա՞ն մասը կարող է հատկացվել վարկի մարմանը: Վարկային մասնագետները խորհուրդ են տալիս վերցնել այնքան վարկ, որի ամսական մարումը չի գերազանցում հաճախորդի ամսական եկամուտի 30-50%-ը:

Կապիտալ

Ֆինանսիստների կարծիքով, եթե անհատի կարողությունը մեծ է, սակայն նա չունի կապիտալ (տուն, ավտոմեքենա, անշարժ գույք և այլն), ապա նա ապրում է միայն այդ օրով, չի խնայում, չի մտածում վաղվա մասին: Կապիտալի առկայությունն իհարկե կնպաստի վարկատու կազմակերպության կողմից վարկի տրամադրման վերաբերյալ դրական պատասխան տալուն:

Գրավ/երաշխիք

Վարկերը կարող են տրամադրվել առանց ապահովվածության (բլանկային վարկեր) և ապահովածությամբ: Օվերդրաֆտները և ապառիկ վարկերը սովորաբար տրամադրվում են առանց ապահովվածության, հատկապես, երբ խոսքը գնում է փոքր գումարների մասին:

Ապահովվածություն ունեցող վարկերի դեպքում պահանջվում է պայմանագրով սահմանված ապահովության միջոցի առկայություն: Կախված վարկի տեսակից, որպես ապահովության միջոց կարող են հանդիսանալ, օրինակ, երաշխավորությունը, ավտոմեքենան, անշարժ գույքը, հաճախորդի դրամական միջոցները և այլն: Օրինակ՝ ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով տրամադրված վարկի ապահովության միջոց կարող է հանդիսանալ այն մեքենան, որի համար տրամադրվել է վարկը: Սա նշանակում է, որ մինչև վարկի ամբողջական մարումը ավտոմեքենան ֆիզիկապես գտնվում է հաճախորդի մոտ, և նա կարող է օգտագործել այն, սակայն չի կարող իրականացնել տնօրինման գործարքներ (օրինակ՝ վաճառել, նվիրել մեկ այլ անձի և այլն):

Այլ պայմաններ

Վարկունակության գնահատման ժամանակ բանկերը և վարկային կազմակերպությունները հաշվի են առնում նաև հաճախորդի ընտանիքի մեծությունը՝ գնահատելու համար հնարավոր ծախսերը, ինչպես նաև ուշադրություն են դարձնում՝ արդյոք հաճախորդը հաճախ է փոխում իր աշխատավայրը և բնակավայրը, որպեսզի գնահատեն վերջինիս կայունությունը:

6.8 Վարկի տեսակներ

Ապառիկ

Սպառողական վարկերի վգալի մասը տրամադրվում են ապառիկի տեսքով: Ապառիկների միջոցով բանկը կամ վարկային կազմակերպությունը օգնում է տվյալ պահին վաճառքի սրահից ձեռք բերել կենցաղային տեխնիկա կամ այլ սարքավորումներ, որի արդյունքում հաճախորդը պարտավորվում է հետագայում հետ վճարել համապատասխան ընկերությանը: Որպես կանոն, այս վարկերի համար սահմանվում է հավասարաչափ վճարումներով վարկի մարման գրաֆիկ, որի դեպքում հաճախորդը յուրաքանչյուր ամիս կատարում է միևնույն չափի վճարներ:

Ապառիկը հարմար է հատկապես մեծ գնումների ֆինանսավորման համար: Վարկի ժամկետը հիմնականում 1-3 տարի է: Այն չպիտի գերազանցի ֆինանսավորվող ապրանքի պիտանելիության ժամկետը: Որպես կանոն, այս վարկերի համար սահմանվում է տարեկան ամրագրված տոկոսադրույք, սակայն երբեմն կարող են առաջարկել նաև «լողացող» կամ փոփոխական տոկոսադրույք: Դա նշանակում է, որ տոկոսադրույքը կարող է բարձրանալ կամ իջնել՝ կախված որևէ գործոնից:

Բացի տոկոսավճարներից, վարկ ստանալու համար հնարավոր է լինեն նաև այլ ծախսեր, ինչպես օրինակ՝ վարկի տրամադրման և սպասարկման վճարներ, գրավի գնահատման ծախսեր, ապահովագրական ծախսեր և այլն: Այս ծախսերը մեծացնում են վարկի իրական ծախսերը, որն արտացոլվում է վարկի փաստացի տոկոսադրույքում: Որպեսզի վարկառուն կարողանա համեմատել իրեն առաջարկվող վարկերի տոկոսադրույքները, նրա համար շատ կարևոր է տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, որը պարտադիր նշվում է վարկի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրերում և վարկային պայմանագրում:

Ապառիկ վաճառքներ իրականացնելու նպատակով այսօր շատ վաճառակետեր կնքում են համագործակցության պայմանագրեր տարբեր բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, որը նրանց հնարավորություն է տալիս ձևակերպել ապառիկ վաճառքներ անմիջապես խանութում:

Օվերդրաֆտ

Օվերդրաֆտը բանկային հաշվի կամ վճարային քարտի միջոցով տրամադրվող դրամական միջոցներ են՝ ընթացիկ ծախսերի և ոչ խոշոր գնումներ իրականացնելու համար:

Օվերդրաֆտները սովորաբար տրամադրվում են հաճախորդի կանոնավոր ստացվող եկամտի կրկնապատիկի կամ եռապատիկի չափով: Տոկոսագումարները հաշվարկվում են միայն հաճախորդի կողմից օգտագործված գումարի, այլ ոչ թե տրամադրված ամբողջական օվերդրաֆտի չափով: Ըստ այդմ, վճարվող տոկոսագումարները կարող են մշտապես տարբերվել՝ կախված օգտագործված գումարից:

Ապառիկն ու օվերդրաֆտը սպառողական վարկի երկու ամենաօգտագործվող տեսակներն են:

1 Ա

Ո՞ր հատկանիշը վարկի ո՞ր տեսակին է պատկանում:
Դասավորի՛ր հատկանիշները աղյուսակի մեջ:

Գրավոր վարկային պայմանագիր - ամսական հավասարաչափ մարումներ - երբ ընթացիկ հաշվի միջոցները անբավարար են - սպառման կարճաժամկետ կարիք - փոփոխական - ավելի խոշոր գնում - ամսական եկամտի կրկնապատիկը կամ եռապատիկը - հավասարաչափ մարումներ - կանոնավոր եկամուտ - գրավ

	Ապառիկ վարկ	Օվերդրաֆտ
Ձև		
Վարկի նպատակ		
Վարկի ժամկետ		
Վարկի գումար		
Տոկոսադրույք		
Վարկի հետվճար		
Ապահովվածություն		
Վարկի մարում		

6.9 Վարկի հետ կապված ծախսեր

Վարկի հետ կապված ծախսեր ապառիկ վարկի դեպքում

Ապառիկի դեպքում վարկի հետ կապված ծախսերը ներառում են տոկոսագումարներ և այլ ծախսեր (օրինակ՝ սպասարկման վճար):

Վարկի դիմաց գանձվելիք տոկոսները հաշվարկվում են հետևյալ կերպ.

Ամսական հետվճարների չափը որոշվում է հետ վերադարձման ենթակա ընդհանուր գումարը բաժանելով վարկի ժամկետի վրա:

$$\text{տոկոսագումար} = \frac{\text{մայր գումար} \times \text{ամսական տոկոսադրույք} \times \text{ամիսների քանակ}}{100}$$

Օրինակ՝

Հաշվի քաղվածք		
	1-ին վարկ	**2-րդ վարկ**
Մայր գումար	500,000 ՀՀ դրամ	500,000 ՀՀ դրամ
Ամսական տոկոսադրույք (տարեկան տոկոսադրույքը բաժանած 12 ամսվան)	1,5%	1,5%
Ժամկետ	24 ամիս	48 ամիս
Արդյունքներ	**1-ին վարկ**	**2-րդ վարկ**
Սկզբնական մայր գումար	500,000 ՀՀ դրամ	500,000 ՀՀ դրամ
+ տոկոսագումար (որը հաշվարկվում է նախորդ բանաձևի միջոցով)	180,000 ՀՀ դրամ	360,000 ՀՀ դրամ
Հետվերադարձման ենթակա ընդհանուր գումար	680,000 ՀՀ դրամ	860,000 ՀՀ դրամ
Ամսական մարում	28,333 ՀՀ դրամ	17,917 ՀՀ դրամ

Ստացվում է, որ

→ Նույն պայմանների սակայն ավելի երկար ժամկետի դեպքում վարկը դառնում է ավելի թանկ,

→ ավելի երկար ժամկետի դեպքում ամսական մարումները համեմատաբար ցածր են լինում

Վարկի հետ կապված ծախսեր օվերդրաֆտի դեպքում

Օվերդրաֆտի դեպքում վերցրած վարկի չափը կարող է տատանվել: Օրինակ՝ այն կարող է նվազել, երբ ամսվա սկզբին հաշվին փոխանցվի աշխատավարձ:

Այդ պատճառով փաստացի ձևավորվող ծախսերը կարող են հաշվարկվել միայն հետին ամսաթվով: Նախապես հնարավոր է միմյանց հետ համեմատել միայն տարբեր օվերդրաֆտների տոկոսադրույքները:

Հաշվարկման օրինակ

Որքա՞ն կկազմի օվերդրաֆտի համար վճարման ենթակա տոկոսագումարը հունիս ամսին, եթե տոկոսադրույքը սահմանված է տարեկան 12% տոկոսադրույք:

$$\text{տոկոսագումար} = \frac{\text{մայր գումար x տոկոսադրույք x օգտագործման օրերի քանակ}}{\text{100 x 365}}$$

Հաշվի քաղվածք					
Օր (արժեք)	**Գործարքի նկարագիր**	**Մնացորդ/ մուտք/ելք**	**Գումար ՀՀ Դրամ**	**Օրեր**	**Տոկոսագումար Դրամ**
31.05 10.06	Օվերդրաֆտի օգտագործված մաս Գումարի օգտագործում	Բացասական մնացորդ Ելք	8,000 12,000	10	26,30
15.06	Օվերդրաֆտի օգտագործված մաս Աշխատավարձի ստացում	Բացասական մնացորդ Մուտք	20,000 22,000	5	32,88
16.06	Հաշվի դրական մնացորդ Կանխիկի օգտագործում	Դրական մնացորդ Ելք	2,000 17,000	1	-
20.06	Օվերդրաֆտի օգտագործված մաս Գումարի մուտք	Բացասական մնացորդ Մուտք	15,000 16,000	4	19,73
30.06	Հաշվի դրական մնացորդ	Դրական մնացորդ	1,000	10	-
Ընդամենը				**30**	**78,91**

1 Ինքնուրույն հաշվիր հետևյալ օրինակները և ապա համեմատիր դասընկերներիդ աղյուսակների հետ:

Հաշվի քաղվածք		
	1-ին վարկ	**2-րդ վարկ**
Մայր գումար	100,000 ՀՀ դրամ	300,000 ՀՀ դրամ
Ամսական տոկոսադրույք (տարեկան տոկոսադրույքը բաժանած 12 ամսվան)	2%	2%
Ժամկետ	12 ամիս	36 ամիս
Արդյունքներ	**1-ին վարկ**	**2-րդ վարկ**
Սկզբնական մայր գումար	--------- ՀՀ դրամ	--------- ՀՀ դրամ
+ տոկոսագումար (որը հաշվարկվում է նախորդ բանաձևի միջոցով)	--------- ՀՀ դրամ	--------- ՀՀ դրամ
Հետ վերադարձման ենթակա ընդհանուր գումար	--------- ՀՀ դրամ	--------- ՀՀ դրամ
Ամսական հետվճար	--------- ՀՀ դրամ	--------- ՀՀ դրամ

2 Ըստ տրված օրինակի՝ հաշվիր ընթացիկ հաշվի վրա օվերդրաֆտի տոկոսագումարը նոյեմբեր ամսվա համար, եթե տոկոսադրույքը սահմանվել է 15% : Համեմատիր քո ստացած արդյունքները դասընկերներիդ աղյուսակների հետ:

Հաշվի քաղվածք					
Օր (արժեք)	**Գործարքի նկարագիր**	**Մնացորդ/ մուտք/ելք**	**Գումար ՀՀ Դրամ**	**Օրեր**	**Տոկոսա-գումար ՀՀ Դրամ**
31.10	Օվերդրաֆտի բացասական մնացորդ	Բացասական մնացորդ	7,000	------	------
08.11	Գումարի օգտագործում	Ելք	15,000		
13.11	Օվերդրաֆտի օգտագործված մաս	Բացասական մնացորդ	22,000	------	------
	Կանխիկի օգտագործում	Ելք	15,000		
15.11	Օվերդրաֆտի օգտագործված մաս	Բացասական մնացորդ	37,000	------	------
	Աշխատավարձի ստացում	Մուտք	29,500		
22.11	Օվերդրաֆտի օգտագործված մաս	Բացասական մնացորդ	7,500	------	------
	Գումարի մուտք	Մուտք	4,500		
30.11	Հաշվի մնացորդ	Բացասական մնացորդ	3,000	------	------
Ընդամենը					

WWW

Բաժին

Sparkassen-ի **դպրոցական ծառայություն**

Տնտեսական թեմաները կյանքում շատ կարևոր դերակատարություն ունեն: Երիտասարդներն այսօր ունեն բարձր գնողունակություն. նրանք ակտիվ սպառողներ են և, հետևաբար, համարվում են տնտեսության պոտենցիալ սպառողների թիրախային խումբ: Այդ իսկ պատճառով ընդհանուր տնտեսական հարցադրումները վերաբերում են նաև նրանց:

Ֆինանսական անձնագրի նպատակն է օգնել հասկանալ տնտեսական երևույթները ու կարողանալ ընդունել ավելի գիտակից որոշումներ:

Դպրոցի տարբեր դասարանների համար կան ֆինանսական անձնագրեր: «Փող, ֆինանսներ և ավելին» միջնակարգ դպրոցի ֆինանսական անձնագիրը անդրադառնում է պահանջմունքներ և կարիք, գործունակություն, ֆինանսական կառավարում, ընթացիկ հաշիվ, խնայում ու ներդրում և վարկ թեմաներին: Աշխատանքային տետրը պարունակում է բոլոր անհրաժեշտ առարկայական տեղեկությունները և աշխատանքային նյութերը:

Sparkassen-ի դպրոցական ծառայությունը գերմանական UNESCO-ի հանձնաժողովի կողմից որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է ՄԱԿ-ի տասնամյակի՝ «Կրթությունը հանուն կայուն զարգացման» Ազգային գործունեության ծրագրի միջոցառումների կատալոգում:

Nachhaltigkeit lernen

Weltdekade der Vereinten Nationen 2005-2014

Bildung für nachhaltige Entwicklung

UNESCO

Որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է համաշխարհային միջոցառումների կատալոգում

Ազգային գործունեության ծրագիր

www.sparkassen-schulservice.de